ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3 (24556), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۵۵۶) ۳ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

ՀԻՆԳՇԱԲԹԻ

4 ՅՈՒՆՈՒԱՐԻ 2024

پنجشنبه – ۱۴ دی ۱۴۰۲

www.alikonline.ir

E-mail: info@alikonline.ir



Իսլ. յեղափոխութեան առաջնորդ.

«ՅԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԸ ԼԻՆԵԼՈՒ ԵՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԵՒ ԱՐԴԱՐ ՊԱՏԺԻ ԹԻՐԱԽ»

«ԱԼԻՔ» - Իսլ. յեղափոխութեան առաջնորդ այաթ. Մեէդ Ալի Խամենէին Քերմանում տեղի ունեցած ահաբեկչական գործողութեան առիթով հանդէս է եկել ուղերձով:

Ուղերձում մասնաւորապէս նշած է. «Իրանական ազգի չարամիտ եւ ոճրագործ թշնամիները հերթական արհաւիրքի հեղինակը դարձան Քերմանում, նահատակների անուշաբոյր շիրիմների մօտ մեծ թւով մարդկանց նահատակութեան պատճառը դառնալով:

Ազգը դարձաւ սգակիր եւ բազմաթիւ ընտանիքներ ողբում են իրենց սիրելիների մահը: Կարծրասիրտ ոճրագործները չէին կարող հանդուրժել իրենց մեծ հրամանատարի՝ նահատակ Ղասեմ Սոլէյմանիի շիրիմ այցելելու ժողովրդի ոգեւորութիւնը: Թող իմանան, որ Սոլէյմանիի լուսաւոր ուղու յետնորդ զինուորը չի հանդուրժի իրենց ստորութիւնն ու յանցագործութիւնը: Թէ՛ անմեղների արիւնով ներկուած ձեռքերը, թէ՛ չարամիտ եւ յանցաւոր ուղեղները, որ նրանց մոլորութեան պատճառն են դարձել, այսուհետեւ լինելու են հետապնդման եւ արդար պատժի թիրախ: Աստծոյ կամօք, այս յանցագործութիւնը ծանր պատասխանի է արժանանալու:

Յաւակցում եմ զոհուածների ընտանիքներին եւ աղօթում նրանց համբերութեան համար: Ամենակարող Աստծուց նրանց համար հայցում եմ հոգու միխթարութիւն: Տայ Աստուած, որ նահատակների հոգիները երկու աշխարհների տիկնոջ եւ նահատակների մօր՝ Մեղիղէ Թահերէի հիւրը լինեն: Վշտակցում եմ վիրաւորներին եւ աղօթում նրանց ապաքինման համար»:

Նախագահ Ռէյիսի.

«Իրանի ժողովուրդը վճռականօրէն կը պայքարի ահաբեկչութիւնն արմատախիլ անելու համար»

«ԱԼԻՔ» - Յաւակցելով Քերմանի ահաբեկչական ոճրագործութեան ժամանակ մի խումբ հայրենակիցների նահատակութեան կապակցութեամբ՝ Հանրապետութեան նախագահը պատկան մարմիններին յանձնարարել է հնարաւորին արագ ձեռնարկել անհրաժեշտ միջոցները՝ տուժածների ցաւը թեթեւացնելու, վիրաւորներին բուժելու եւ Քերման քաղաքում անվտանգութիւնը վերականգնելու համար:

Այաթ. Մեէդ Էբրահիմ Ռէյիսին իր ուղերձում խստօրէն դատապարտելով

(Շար. 8-րդ էջում)

ԳԻՐ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ



Խոր ցաւով եւ դառը կսկիծով լսեցինք հանգուցեալ Ղասէմ Սոլէյմանիի նահատակութեան չորրորդ տարելիցի արարողութեան առիթով իրենց յարգանքի տուրքը մատուցող անմեղ ժողովրդի դէմ ահաբեկչական արարքի մասին, որին զոհ գնացին աւելի քան 100 մարդ եւ աւելի քան 140 վիրաւոր:

(Շար. 8-րդ էջում)

Փոքրամասնութիւնների պատգամաւորները դատապարտել են Քերմանի ահաբեկչական արարքը

(Տես 8-րդ էջում)

Կոչ վշտակցութեան եւ դատապարտման

(Տես 8-րդ էջում)

Ահաբեկչական յարձակում Քերմանում.

զոհերի թիւը գերազանցում է՝ 8 տասնեակը, իսկ վիրաւորներինը՝ 284-ը



«ԱԼԻՔ» - Իսլ. յեղափոխութեան Պահապանների կորպուսի «Ղոդս» ուժերի հրամանատար, գեներալ Ղասեմ Սոլէյմանիի նահատակութեան չորրորդ տարելիցին, Քերման քաղաքում դէպի նահատակների գերեզմանատուն տանող ճանապարհին տեղի է ունեցել երկու պայթիւն:

Պայթիւնների հետեւանքով զոհուել է 84 մարդ, վիրաւորուել՝ 284-ը:

Արդէն յայտնի է, որ պայթիւններն ահաբեկչական գործողութեան հետեւանք են եղել: Առաջին պայթիւնից անմիջապէս յետոյ որոտացել է երկրորդը:

«Թասնիմ» լրատուական գործակալութիւնը վկայակոչելով իր աղբիւրներին տեղեկացրել է, որ գերեզմանատան մուտքի մօտ եղել է ռումբեր պարունակող երկու պայուսակ, որոնք հաւանաբար պայթեցուել են հեռակառավարման միջոցով:

Յաւելենք նաեւ, որ կառավարութեան որոշմամբ, այսօր երկրում յայտարարուել է սգոյ օր:

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام سوپر
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Դեսպան Սոբհանի.

«Հայաստանում արտատարածքային միջանցք ստեղծելու մասին խօսող երկրները պատրա՞ստ են նոյնն անել իրենց տարածքում»

Մեր դիրքորոշումը չի փոխուել՝ դէմ ենք տարածաշրջանում սահմանների եւ աշխարհաքաղաքական փոփոխութիւններին: Սահմանների փոփոխութիւնը մեր համար կարմիր գիծ է, դա Իրանի բարձրագոյն իշխանութիւնների մակարդակով է յայտարարուել, եւ ոչ ոք չի կարող յետ կանգնել դրանից: Այս մասին Հայաստանի հանրային հեռուստաընկերութեանը տուած հարցազրոյցում յայտարարել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհդի Սոբհանին:

Նա ընդգծել է, որ այլ երկրի տարածքում արտատարածքային միջանցք ստեղծելու որեւէ իմաստ չկայ, եւ որ ամէն երկրի հաղորդակցման ուղիները գտնուում են իր ինքնիշխանութիւնն այդ տարածքում իրացնող պետութեան ձեռքում:

«Կարծում եմ՝ Հայաստանի տարածքում արտատարածքային միջանցքի հարցի արծարծումը որեւէ աղերս չունի միջազգային իրաւունքի, երկրների տարածքային ամբողջականութեան եւ ազգային ինքնիշխանութեան հետ: Ինչպէս նշուած է Հայաստանի վարչապետի «Խաղաղութեան խաչմերուկ» ծրագրում, Հայաստանի տարածքում տարածքային ցանկացած կապ պէտք է գործի այդ երկրի ազգային ինքնիշխանութեան ներքոյ: Այն երկրները, որոնք խօսում են Հայաստանի տարածքում արտատարածքային միջանցքի մասին, պատրա՞ստ են արդեօք իրենց տարածքում ստեղծել նման արտատարածքային միջանցքներ: Կարծում եմ՝ պատասխանը բացասական է: Ուստի, այն, ինչն իրենք իրենց համար չեն ցանկանում, ուրիշների համար եւս չպէտք է ցանկանան»,- յայտարարել է դեսպան Սոբհանին:

News.am

Նիկոլ Փաշինեանը ցաւակցական հեռագիր է յղել Իրանի նախագահին

Parstoday.arm-ի համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը ցաւակցական հեռագիր է յղել Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Էբրահիմ Ռէյիսիին՝ Քերմանում տեղի ունեցած ողբերգութեան կապակցութեամբ:

«Սրտի խորը կսկիծով տեղեկացայ այսօր (յունւ.3) Քերմանում տեղի ունեցած ողբերգութեան վերաբերեալ, որի հետեւանքով զոհուել եւ վիրաւորուել են անմեղ մարդիկ:

Այս ծանր պահին Հայաստանի Հանրապետութեան ժողովրդի եւ անձամբ իմ անունից, Ձե՛ր զերազանցութիւն, թոյլ տուէք վշտակցութեան խօսքեր յղել զոհերի բոլոր հարազատներին եւ շուտափոյթ ապաքինում մաղթել բոլոր վիրաւորներին»,- ասուած է հեռագրում:

Հայաստանի ԱԳՆ.

«Մենք ցնցուած ենք Իրանում պայթիւնների մասին լուրից»

Parstoday.arm-ի համաձայն՝ «Մենք ցնցուած ենք՝ իմանալով Իրանի Քերման քաղաքում տեղի ունեցած պայթիւնների մասին, որոնց զոհ են դարձել աւելի քան 100 անմեղ բնակիչներ»: Այս մասին ասւում է Հայաստանի ԱԳՆ X-ի միկրոբլոգում հրապարակուած հաղորդագրութեան մէջ:

«Մեր մտքերն ու աղօթքները տուժածների եւ նրանց ընտանիքների հետ են»,- ասուած է ՀՀ ԱԳՆ յայտարարութեան մէջ:

Հայաստանը դաւաճանեց Երուսաղէմահայութեանն ու հայկական շահին

Յունուարի 5-6-ին, երբ արդէն Սուրբ Յարութեան տօնին ընդառաջ շատերը հայեացքն ուղղեն Երուսաղէմ՝ Սուրբ Յարութեան տաճարին չեն էլ նկատի, որ Արցախի դաւաճանաւածութիւնից յետոյ համաշխարհային հոգեւոր-քաղաքական կեանքում հայ ժողովրդի մեծագոյն ուժականութեան՝ սուրբ երկրում Հայ Առաքելական Եկեղեցու տիրական ներկայութեան վտանգաւածութեան պայմաններում Հայաստանը երկրորդ դաւաճանութիւնն արեց:

Այս օրերին երուսաղէմահայութեան, Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան գոյքի, ունեցւածքի, իրաւունքի ու ներկայութեան դէմ իսրայէլցի ծայրայեղականների արշաւանքները, յարձակումները, հրէական պետութեան կրաւորական կեցւածքը որեւէ կերպ Հայաստանի Արտաքին գործերի նախարարութեան համար անհանգստութեան առիթ չդարձաւ, ու պաշտօնական Երեւանից քար լռութիւն. որեւէ դատապարտում, դիւանագիտական քայլ, արձագանգ չեղաւ:

Նոյն Ֆրանսիան իր դիւանագէտի շուրթերով էր արտայայտում անհանգստութիւնը, իսկ մեր դիւանագիտական կորպուսում կամակոր երեխային յատուկ ճղճիմ ներքաղաքական խաղերն էին միայն, երբ ՔՊ քիմքին հաճոյ լինելու համար Իրաքի պէս կարեւոր երկրում միայն 2023-ի սեպտեմբերի 4-ին դեսպան նշանակուած Միսակ Բալասանեանին դեկտեմբերի 29-ին արդէն յետ կանչեցին:

Երուսաղէմում հայութեան դարաւոր ներկայութիւնը հայկականութեան ներուժն է, մեր եզակի վճռական համաշխարհային դերակատարումը, յատկապէս տարածաշրջանային նման պրկուած պայմաններում:

Համաշխարհային հարթակներում Հայաստանի Հանրապետութեան հետ հաշի էին նստում Արցախի գործօնով, Երուսաղէմում հայութեան ներկայութեամբ: Հայաստանի իշխանութիւնների կողմից Արցախը դաւաճանուած է, երուսաղէմահայութիւնը դաւաճանուած է, Մայր Աթոռը թշնամական յարձակման թիրախում է Հայրենիքում:

Յ.Գ. - Այսօր (յունուարի 3-ԽՄԲ.) ցաւալի լուր ստացուեց, որ 90 տարեկան հասակում մահկանացուն է կնքել Երուսաղէմի Սուրբ Յակոբեանց միաբանութեան անդամ, Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան երէցագոյն սպասաւոր Արիս արք. Շիրանեանը: Բնականաբար Մփիւռքի Չյանձնակատարի գրասենեակից ցաւակցական ոչ մի խօսք չենք լսի:

Գեղամ Մանուկեան
ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ,
ՀՀ ԱԺ
«Հայաստան»խմբակցութեան անդամ

Փաշինեանը վախեցա՞ւ Մոսկուայի պատժիչ գործողութիւններից

Շուրջ կէս տարուայ բոյկոտից յետոյ Նիկոլ Փաշինեանը դեկտեմբերի վերջին մեկնեց Սանկտ Պետերբուրգ երկօրեայ աշխատանքային այցի ընթացքում մասնակցեց՝ ինչպէս ԵԱՏՄ խորհրդի պաշտօնական նիստին, այնպէս էլ ԱՊՀ երկրների ղեկավարների հետ ոչ-պաշտօնական հանդիպումներին:

Կարեւորելով, որ 2024 թւականի յունուարի 1-ից Հայաստանը ստանձնում է Եւրասիական տնտեսական միութեան (ԵԱՏՄ) մարմիններում նախագահութիւնը, Փաշինեանը նիստի շրջանակներում հնչեցրած ելոյթում շեշտել էր.

«ԵԱՏՄ-ն տնտեսական միաւորում է, որը չպէտք է ունենայ քաղաքական եւ, առաւել եւս՝ աշխարհաքաղաքական օրակարգ: Մենք շարունակում ենք այն այդպէս ընկալել եւ հէնց այս համատեքստում զարգացնել փոխգործակցութիւնը մեր տնտեսական համագործակցութեան շրջանակներում՝ ձգտելով կանխել եւրասիական ինտեգրումը քաղաքականացնելու բոլոր փորձերը: ԵԱՏՄ-ն եւ նրա տնտեսական սկզբունքները չպէտք է փոխկապակցեն քաղաքական յաւակնութիւնների հետ: Առեւտրի եւ ինտեգրման հիմնարար ազատութիւնները չեն կարող եւ չպէտք է սահմանափակեն՝ քաղաքական նկատառումներից ելնելով, դա միանշանակ կը յանգեցնի միաւորման հիմնարար սկզբունքների կոռոզիայի»,- իր տեսակէտը հիմնաւորել է Փաշինեանը:

168.am-ի հետ զրոյցում «Վերելք» տեղեկատուական-վերլուծական կենտրոնի քաղաքական մեկնաբան Հայկ Խալաթեանը, խօսելով Փաշինեանի հնչեցրած այս շեշտադրումների մասին, նախ անդրադարձաւ Սանկտ Պետերբուրգ մեկնելու՝ Փաշինեանի դրդապատճառներին:

«Փաշինեանը հասկացաւ՝ այս անգամ Սանկտ Պետերբուրգ չմեկնելը Մոսկուան կը համարի բացայայտ մարտահրաւէր, ինչին կը հետեւեն ռուսական կողմի պատժիչ գործողութիւնները, որովհետեւ Հայաստանի կախուածութիւնը Ռուսաստանից էլ աւելի է մեծանում: Ինչ վերաբերում է Փաշինեանի ելոյթի ուղերձներին՝ ապա դրանք եւս մէկ անգամ փաստում են՝ Հայաստանի իշխանութիւնը փորձում է տնտեսական կախուածութիւնը Ռուսաստանից պահել, իսկ անվտանգային առումով՝ այլ բան անել, ինչին ի պատասխան Մոսկուան հասկացնում է՝ սխալւում են»,- մանրամասնեց Խալաթեանը:

Փաշինեանի՝ Սանկտ Պետերբուրգ մեկնելուց մէկ օր առաջ հրապարակուեց ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղարի Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում յատուկ ներկայացուցիչ Խաւիէր Կոլոմինայի՝ Վրաստանի հեռուստատեսութեանը տուած հարցազրոյցը, որտեղ անդրադառնալով մեր երկրին՝ ասել էր, թէ Հայաստանը շատ յստակ որոշում է կայացրել փոխել իր արտաքին քաղաքականութիւնը եւ իրեն հեռու պահել Մոսկուայի հետ յարաբերութիւններում: Հայկ Խալաթեանի գնահատմամբ՝ այս հանգամանքն ապացուցում է, որ Հայաստանի իշխանութիւնը գնում է այդ ճանապարհով, պարզապէս մտածում են, որ Մոսկուայի հետ կտրուկ քայլերը կարող են յանգեցնել պատասխան կոշտ քայլերի՝ տնտեսական ոլորտում:

Ադրբեջանն անւանել է Հայաստանի հետ խաղաղութեան պայմանագրի բանակցութիւնների «հիմնական ուղղութիւնը»

Բաքուն յուսով է մօտ ապագայում խաղաղ համաձայնագրի նախագծի շուրջ բանակցութիւնների եւս մէկ փուլ անցկացնել Ադրբեջանի եւ Հայաստանի պաշտօնեաների միջեւ, ասել է Ադրբեջանի նախագահի յատուկ յանձնարարութիւնների գծով բանագնաց Էլչին Ամիրբեկովը էստոնական հեռուստալրագրին տուած հարցազրոյցում, - հաղորդում է Sputnik Ադրբեջանը:

Ըստ նրա՝ «հաղորդակցութեան բացումը Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղ գործընթացի անբաժանելի մասն է»:

«Բանակցութիւնների հիմնական ուղղութիւնը խաղաղութեան համաձայնագրի տեքստի համաձայնեցումն է: Նրանում նշւում են ապագայ խաղաղութեան բոլոր հիմնական պարամետրերը, այդ թւում՝ հաղորդակցութիւնների վերականգնումը: Բացի հիմնական ուղղութիւնից, կան եւս երկուսը՝ հաղորդակցութիւնների բացումը, ինչպէս նաեւ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ պետական սահմանի սահմանազատումը եւ դրան յաջորդող սահմանագծումը»,- ասել է Ամիրբեկովը:

Խօսելով տրանսպորտային հաղորդակցութեան վերականգնման մասին՝ Ադրբեջանի նախագահի յատուկ յանձնարարութիւններով ներկայացուցիչը յիշեցրել է ադրբեջանական կողմի նախաձեռնութիւնը՝ «վերականգնել «Զանգեզուրի միջանցք»-ը, որպէսզի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութիւնում կամ երկրի հիմնական մասում բնակւող ադրբեջանցի քաղաքացիները անխոչընդոտ ցամաքային հաղորդակցութիւն ունենան»:

«Խօսքը 42 կիլոմետր երկարութեամբ երկաթուղային գծի մասին է, որը, ցաւօք, աւերւել է հակամարտութեան արդիւնքում: Խօսքը միայն բացակայող տեղամասի կառուցման մասին չէ: Ի դէպ, մեր կողմից այս աշխատանքը գրեթէ աւարտուած է: Նկատի ունեմ Հորադիզ-Ագբենդ հատուածը: Ցաւօք, հայկական կողմը չի էլ սկսել աշխատել այս նախագծի տեխնիկական հիմնաւորման վրայ»,- ասել է նա:

News.am

Աւետիք Իշխանեան.

«Երեք զօրավար»

Վաղուց մտքիս էր այս թեմայով յօդած գրել։ Պատկերացնենք, որ կազմուում է բոլոր ժամանակների հայոց զօրավարների ամբողջական ցուցակ, Հայկ Նահապետից սկսած... ներեցէք՝ Սուրէն Պապիկեանով վերջացրած։ Եւ ողջ հայութիւնը՝ Հայաստանում եւ Սփիւռքում, քւէարկութեամբ որոշում է, թէ այդ բոլորի մէջ ովքեր են երեք ամենանշաւոր, ամենաշատ յաղթանակներ տարած զօրավարները։ Մի պահ մոռանանք, աւանդական հայկական ընտրութիւնները, հանրաքւէները, սոցիոլոգիական հարցումները եւ պատկերացնենք, որ հարցումներն ու հաշւարկը կատարւում են միանգամայն ազնիւ, անաչառ։ Կարծում եմ՝ բոլորը կը համաձայնւեն, որ ձայների մեծ առաւելութեամբ, ըստ ժամանակագրութեան, առաջին երեք տեղերը կը զբաղեցնեն Վարդան Մամիկոնեանը, Անդրանիկ Օզանեանը եւ Վազգէն Սարգսեանը։ Այս համոզմանը եկել եմ, ոչ միայն իմ անձնական դիտարկումներով, այլեւ առաւել լայն շրջապատում լսածս խօսքերից։

Փորձենք քննարկել, թէ պատմականօրէն որքանո՞վ է արդար նման կարծրատիպային մտածողութիւնը։

Սկսենք Վարդան Մամիկոնեանից։ Վարդան Մամիկոնեանը սերում է յայտնի Մամիկոնեան հայոց սպարապետական տոհմից։ Պատմութիւնից յայտնի են Վասակ Մամիկոնեանը, Մուշեղ Մամիկոնեանը, Գայլ Վահան Մամիկոնեանը, որոնք հիմնականում յաղթանակներ են տարել։

Իսկ Վարդան Մամիկոնեա՞նը։ Չեմ ցանկանում մտնել Վարդան Մամիկոնեան-Վասակ Սիւնի բանավէճի մէջ, թէ ո՞վ էր ճիշտ, ով՝ սխալ։ Վարդան Մամիկոնեանը յայտնի է, որպէս Աւարայրի ճակատամարտում հայոց զօրքի հրամանատար։ Արձանագրենք, որ 451 թւականին, Աւարայրի ճակատամարտում Հայոց Բանակը, Վարդան Մամիկոնեանի գլխաւորութեամբ պարտութիւն կրեց։ Պարտութիւնից յետոյ, պարսից արքունիքում սկսեցին հայ իշխանների դատավարութիւններն ու մահապատիժները։ Աւարայրի պարտութիւնը մեզ ներկայացւել է որպէս բարոյական յաղթանակ... անհասկանալի եզրոյթ։ Ես կը գերադասէի անբարոյական, բայց իրական յաղթանակ։ Արդ, ո՞րն է պատճառը, որ միջնադարում ունենալով յաղթանակներ կերտող զօրավարներ, ինչպիսիք են նոյն Մամիկոնեաններ Վասակը, Մուշեղը, Վահանը, ինչպէս նաեւ Թէոդորոս Ռշտունին եւ Վահրամ Պահլաւունին, մեծարում ենք պարտութիւն կրած զօրավարին։ Վարդան Մամիկոնեանին նւիրւած «Վարդանանք» վէպ է գրում Դերենիկ Դեմիրճեանը, հոյակապ նկար է նկարում Գրիգոր Խանջեանը, Երեւանում տեղադրւում է Երւանդ Քոչարի հեղինակած արձանը։

Կարծում եմ, որ պատասխանը շատ պարզ է։ Վարդան Մամիկոնեանի պայքարը յանուն քրիստոնէութեան էր, այդ իսկ պատճառով, անկախ պարտութիւնից, Հայոց Եկեղեցին նրան հերոսացրեց եւ սրբացրեց։ Իսկ միջնադարում հայոց պատմութիւնը եւ գրում եւ այն քարոզում էին եկեղեցու սպասաւորները։ Եւ այդպէս դարէ-դար, սերնդէսերունդ հայ ժողովրդի համար որպէս հերոսի խորհրդանիշ է հանդիսացել, իր հիմնական ճակատամարտում պարտութիւն կրած Վարդան Մամիկոնեանը. «Հա՛յ եմ ես, հա՛յ եմ ես, քաջ Վարդանի թո՛ռն եմ ես»։

...

Այժմ փորձենք գնահատական տալ զօրավար Անդրանիկ Օզանեանին։

Մեր սերնդի համար պատանեկան տարիներից, հայ ազատագրական շարժման թիւ մէկ հերոսն Անդրանիկ զօրավարն էր։ Զօրավար Անդրանիկի մասին լեգենդեր էին պատմում, երգեր երգում.

Հերոս մռնչաց, սուլթան դողդողաց,
Վիլհելմի աչքից արտասուք ցոլաց,
Սուրդ թշնամու կրծքին շողշողաց,
Հայոց ղեկավար, հերոս Անդրանիկ։

Դեռեւս ԽՍՀՄ տարիներին, Ուջանում կանգնեցւեց Անդրանիկ զօրավարի արձանը։

Նոյն ԽՍՀՄ տարիներին, որպէս արգելւած գրականութիւն, ձեռքս ընկաւ, կարծեմ Բէյրութում հրատարակւած Հրայր Դժոխքի մասին գիրքը։ Հիացած էի Հրայր Դժոխքի մտածողութեամբ եւ գործունէութեամբ։ Հրայր Դժոխքը դէմ էր տարերային ֆիդայական շարժմանը, որի նպատակն էր «քաղաքակիրթ» երկրների, այսօրւայ եզրոյթով՝ միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրել բազմաչարչար հայ ժողովրդի տառապանքների վրայ։ Ֆիդայական հրամանատարների հերթական հանդիպման ժամանակ, Հրայր Դժոխքը կտրականապէս դէմ արտայայտւելով ֆիդայական շարժմանն, առաջարկում էր զինել բոլոր հայկական բնակավայրերը, դրանք դարձնելով պաշտպանւած ամրոցներ, բնակիչներից կազմւած զինւած ջոկատներով։ Եւ երբ այդ ամէնը դառնայ իրականութիւն, բարձրացնել համազգային, կազմակերպւած ապստամբութիւն, հռչակելով անկախ Հայաստան։ Սա պետական մտածողութիւն է։ Իմ համոզմամբ, հէնց Հրայր Դժոխքն է եղել առաջին հայ գործիչը, ով նպատակ է դրել հասնել Հայաստանի անկախութեանը։ Հրայր Դժոխքը Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր՝ Արամ Մանուկեանի նախակերպարն է։ Ինչեւէ, Հրայր Դժոխքի այս առաջարկութեանն ի պատասխան, Անդրանիկ Օզանեանը հրացանն ուղղել է նրա դէմ։ Սակայն, Հրայր Դժոխքի հեղինակութիւնն այնքան մեծ է եղել, որ ներկաները զինաթափել են Անդրանիկ Օզանեանին։

Այս դիպւածն, անկեղծ ասած, իմ առաջին հիասթափութիւնն էր Անդրանիկ զօրավարից։

Հետագայում, աւելի մանրամասն հետաքրքրւելով 19-րդ դարի վերջերի եւ 20-րդ դարի սկզբների ազատագրական շարժումներով, հիասթափութիւնս խորացաւ։ Անդրանիկ զօրավարը մասնակցել է Բուլղարիայում ազատագրական պայքարին՝ ընդդէմ Օսմանեան կայսրութեան։ Այնուհետեւ նա նշանակւում է ռուսական բանակի հրամանատարութեան տակ, առաջին հայկական կամաւորական գնդի հրամանատարը եւ մասնակցել է ռուս-թուրքական պատերազմին։ Առանց կոնկրետ ճակատամարտեր նշելու, Անդրանիկ զօրավարին են վերագրում յաղթանակներ, որոնց համար, նա պարգեւատրւել է շքանշաններով եւ ստացել գեներալ-մայորի աստիճան։ Չեմ ժխտում, ամենայն հաւանականութեամբ եղել են յաղթանակներ, բայց նրանք եղել են ռուսական յաղթանակներ, ճակատամարտերի մարտավարութիւնները մշակւած են եղել ռուսական հրամանատարութեան կողմից։ Կարծում եմ, Անդրանիկ զօրավարի համար ամենապատասխանատու նշանակումը եղել է Կարինի (Էրզրում) պարետի պաշտօնը։ Այն պահանջում էր ունենալ կազմակերպչական ունակութիւններ, լինել վճռական՝ դիմագրաւելու թուրքական յարձակմանը։ Յաւօք, Անդրանիկ զօրավարն ի վիճակի չեղաւ միաւորելու պառակտւած հայկական տարբեր ջոկատներին, քաղաքական ուժերին եւ նախընտրեց նահանջ կազմակերպել Կարինից։ Անդրանիկ զօրավարն ինչ-ինչ պատճառներով չմասնակցեց 1918 թ. մայիսին հայ ժողովրդի համար վճռական նշանակութիւն ունեցող Սարդարապատի,

Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի ճակատամարտերին։ Նա իր զօրախմբով Դսեղում էր, շատ մօտ Ղարաքիլիսային, որտեղ հայոց ուժերը որոշակի անյաջողութեան մատնեցին։ Դպրոցում այդ շրջանի հայոց պատմութիւն անցնելիս, ներկայացւում էր, որ Անդրանիկ զօրավարը 1918 թ. ազատագրել է Նախիջեւանը եւ հեռագիր տւել Ստեփան Շահումեանին՝ Նախիջեւանը յայտարարելով Խորհրդային Ռուսաստանի մաս։ Սակայն, յետխորհրդային շրջանում այս մասին չի գրւում։ Եթէ այն ճիշտ է, ապա ինձ համար անընդունելի։ Չէ՞ որ գոյութիւն ունէր անկախ Հայաստան։ Եթէ նեղացած էր Հայաստանի կառավարութիւնից, կարծում եմ Հայաստանից նեղանալ չէր կարելի։ Գոնէ հռչակէր անկախ Նախիջեւանի հայկական պետութիւն, ինչպէս Նըժդեհը հռչակեց Լեռնահայաստան։

Յանուն արդարութեան պէտք է ասել, որ Անդրանիկ զօրավարը եղել է իսկապէս հայրենիքին նւիրեալ եւ շատ հմայիչ անձնաւորութիւն։ Այդ մասին են վկայում բոլոր ժամանակակիցները։ Անդրանիկ զօրավարի հետ շատ մտերիմ է եղել Յովհաննէս Թումանեանը, ով իր որդուն՝ Արտաւազդին վստահել է նրան։ Անդրանիկ զօրավարի գնդում է կռւել իմ հարազատ պապը՝ Վահան Չերազը, ով նոյնպէս մեծ պատկառանք է ունեցել զօրավարի նկատմամբ։

Արժանին մատուցելով Անդրանիկ զօրավարին, նշենք, որ այնուամենայնիւ այդ ժամանակաշրջանում մենք ունեցել ենք յաղթանակներ կերտող գործիչներ եւ զօրավարներ, ինչպիսիք են՝ Արամ Մանուկեանը, Դրաստամատ Կանայեանը, Գարեգին Նժդեհը, Դանիէլ Բէկ-Փիրումեանը, Մովսէս Սիլիկեանը եւ ուրիշներ։ Արամ Մանուկեանի շնորհիւ, կազմակերպւեց 1918 թ. մայիսի ինքնապաշտպանական ճակատները, որոնցում իրենց հրամանատարական ձիրքերով աչքի ընկան, Սարդարապատում՝ Դանիէլ Բէկ-Փիրումեանն ու Մովսէս Սիլիկեանը, Բաշ-Ապարանում՝ Դրաստամատ Կանայեանը, Ղարաքիլիսայում՝ Գարեգին Նժդեհը։ Գարեգին Նժդեհն, իհարկէ առաւել յայտնի է Սիւնիքի ազատագրական պայքարով, որի շնորհիւ է, որ Սիւնիքը Հայաստանի մասն է։ Դրաստամատ Կանայեանը՝ զօրավար Դրօն միայն յաղթանակներ է ունեցել։ Նա ոչ միայն Բաշ-Ապարանի յաղթանակի հեղինակն է, այլեւ Լոռին հայկական պահելու։

Հարց է առաջանում, այսքան յաղթանակներ կերտած զօրավարների մէջ, ինչո՞ւ ամենայայտնին Անդրանիկ զօրավարն է, ում յաղթանակների մասին պատմութիւնը լռում է։

Ինչպէս Վարդան Մամիկոնեանի դէպքում, հիմնական դերը կատարել է քարոզչութիւնը։ Եթէ Վարդան Մամիկոնեանի դէպքում եկեղեցու քարոզչութիւնն էր, ապա Անդրանիկ Օզանեանի դէպքում՝ ԽՍՀՄ, այո՛ չզարմանաք՝ կոմունիստական քարոզչութիւնը։ Քանի որ, հայ ազատագրական պայքարի հիմնական գործիչները դաշնակցականներ էին, ինչպէս Արամ Մանուկեանը, Դրաստամատ Կանայեանը, Գարեգին Նժդեհը, կամ ինչպէս Դանիէլ Բէկ-Փիրումեանը եւ Մովսէս Սիլիկեանը գընդակահարւել էին բոլշեւիկների

(Շար. 5-րդ էջում)

Դերենիկ Մելիքեանի ոսպնեակից

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵԿՏՈՐԸ...

Դ. Մ.
Պատմական գիտութիւնների թեկնածու



Հայաստանեան «քաղաքական դաշտում» վերջերս յաճախակի են դարձել երկրի արտաքին քաղաքականութեան վեկտորի կամ օրիենտացիայի (դիմաշրջում) յստակեցման մասին ինչպէս փորձագիտական, այնպէս էլ հասարակական-հանրային քննարկումները։ Այնինչ, սակայն, պարզ է ու յստակ, դա Հայաստանի իշխանախմբի բազմիցս բարձրաձայնած կողմնորոշումն է, որով մէկ կողմից պահպանւում են Ռուսաստանի հետ միասին՝ նրա գլխաւորած այս կամ այն ռազմա-քաղաքական դաշինք ու տնտեսական հաւաքական միութիւն (ՀԱՊԿ, ԱՊՀ, ԵԱՏՄ), իսկ միւս կողմից կարեւորում-գովերգում են արեւմտա-եւրոպական բլոկի ու մասնաւորապէս դրա ռազմա-քաղաքական աջակցութեան յուսալիութիւնը (յիշենք նաեւ սրանից շուրջ երեք ամիս առաջ Երեւանում ԱՄՆ ռազմական սահմանափակ միաւորների հետ համատեղ զօրավարժութիւնները)...։

Որեւիցէ երկրի Արտաքին քաղաքականութեան վեկտորի ճշտորոշումը պայմանաւորւած է այդ երկրի աշխարհագրա-քաղաքական, տնտեսական, ռազմական, ժողովրդագրական եւ այլեւայլ կարելիութիւններով։

Անպայմանաշարհագրական դիրքը, ներքաղաքական անկայուն իրավիճակը եւ դրանից բխող տնտեսական ոչ-յուսալի հեռանկարը եւ այլն, ուղղակիօրէն ազդում են տւեալ երկրի արտաքին քաղաքականութեան ուղղութեան վրայ՝ դրական կամ բացասական առումներով։

Տւեալ պայմաններից բխող բացասական կողմը դա արտաքին ուղղութեան ճշտորոշած վեկտորի (արեւմտեան կամ արեւելեան) բլոկներից մէկին կամ միւսին լիակատար կախւածութիւնն է, որն ըստ էութեան վտանգում է նոյն երկրի ինքնիշխանութիւնն ու պետական համակարգի օրգանների բնականոն գործունէութիւնը։ Դա նաեւ արդիւնք է ոչ գրագէտ եւ արկածախնդիր դիւանագիտութեան։

Դրական կողմը, սակայն, այս կամ այն բլոկին ամբողջովին չտրրւելու դիւանագիտական արւեստին տիրապետելն է։ Իսկ սրա արդիւնքում հնարաւոր է դառնում ինչպէս հարեւան, այնպէս էլ մինչեւ իսկ գերմեծ ուժ համարւող երկրների հետ յարաբերութիւնները ուղղորդել բնականոն հուն, ապահովելու համար երկուստեք ազգային թէ պետական շահերը։

Յատկանշական է, որ Հայաստանի նախորդ իշխանութիւնների արտաքին քաղաքական վեկտորը կամ կողմնորոշումն խոշոր տոկոսով հէնց այդպիսին է եղել՝ բնութագրւելով որպէս «Կոմպլիմենտար» քաղաքականութիւն, որն էլ գործնապէս յաջողութիւններ էր արձանագրել, ինչպէս Արցախեան հիմնահարցի, այնպէս էլ՝ թէ՛ Արեւմուտքի, թէ՛ Ռուսաստանի, եւ թէ՛ առաւել եւս Իրանի Իսլ. Հանրապետութեան հետ բնականոն յարաբերութիւնները կարգաւորելու եւ զարգացնելու ուղղութեամբ։

Այլ խօսքով՝ նոյն գերմեծ երկրների նոյնիսկ «աջակցութիւնը գնահատելի է, երբ այն յենւած է «Առ եւ Տուրի» եւ ո՛չ թէ «Տուր եւ Առի» վրայ»)...։ Յաւօք, այս հասկացութիւնը, մասնակի բացառութիւններով հանդերձ, տիրական չի եղել միջազգային ասպարէզի վերջին տասնամեակների եւ յատկապէս մերօրեայ յարաբերութիւններում, քանզի համաշխարհային պարտադիր «օրինաչափութեան» համաձայն՝ «ուժն է ծնում իրաւունքը» եւ ոչ թէ հակառակը...։*

Անհրաժեշտ ենք համարում այս սիւնակի այսօրւայ թեմային խիստ համահունչ մի պատմական դրւագի անդրադառնալ։

1979 թւականին, Իրանում յետյեղափոխական սկզբնական ժամանակաշրջանում, ռազմավարական առաջնակարգ հիմնահարց էր կրօնապետական երկրի արտաքին քաղաքականութեան վեկտորի կամ օրիենտացիայի ճշտորոշումը։ Յեղափոխութեան էլիտայի ու քաղաքական վերնախաւի հետ հերթական հանդիպման ժամանակ, ահա, յեղ. առաջնորդ եւ Իրանի Իսլ. Հանրապետութեան հիմնադիր Այաթօլլահ Խոմէյնին խիստ ուշագրաւ մի յայտարարութիւն է անում, որով էլ ամուր հիմքի վրայ է դրւում նոր համակարգով օժտւած երկրի արտաքին քաղաքական վեկտորը, որն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ՝ ինքնուրոյն, ինքնիշխան եւ երկրի անկախութիւնը երաշխաւորող մի համարձակ քայլ։

Ահաւասիկ՝ Այաթօլլահ Խոմէյնին ընդգծելով, որ մեծապետական երկրների հետ յարաբերութիւններում պէտք է լինել չափազանց զգօն եւ չխաբւել նրանց կեղծ ժպիտներին ու խօսքերին, շեշտադրեց. «Ռուսաստանը Ամերիկայից է աւելի վատը, Ամերիկան՝ Ռուսաստանից, իսկ Անգլիան՝ բոլորից աւելի վատը...»։

Եւ մինչ օրս, աւելի քան 44 տարի, Իրանը միեւնոյն արտաքին վեկտորով ու օրիենտացիայով դիմագրաւում է նոյն գերուժերի ամենատարբեր ճնշումները, քաղաքական-տնտեսական, ռազմական-տեռորիստական ու քարոզչական գրոհներն ու սանկցիաները։ Իսկ որ ամենակարեւորն է՝ անվտանգ է ու ամբողջական՝ երկրի հող-հայրենին ու պետականութիւնը։

Եւ անտարակոյս, թէ՛ ինձ՝ որպէս հայրենամերձ իրանահայի, եւ թէ՛ Հայաստանի մեր քոյր-եղբայրների ու յատկապէս երկիր Հայաստանի համար Իրանը հանդիսանում է ամենավստահելի հարեւանն ու ազնիւ գործընկերը, որի հետ ռազմավարական տարատեսակ կապերի ամրապնդումը մեծ առաւելութիւններ է կարող հաղորդել արտաքին քաղաքականութեան հայանպաստ ու Հայաստանանպաստ ուղղութիւնները ճշտորոշելու համար։

Նոր տարւայ բարի մաղթանքների հետ միաժամանակ, թող ազգովի յուսադիր հայեացք նետենք համազգային ու հայրենական կորուստների վերականգնման հնարաւոր հեռանկարին, որպէսզի լայն ասպարէզ բացի միեւնոյն համազգային ու հայրենական անխուսափելի յաղթանակների համար։

****)- Ռուբէն, «Հայաստան միջգամաքային ուղիներու վրայ», էջ 179, Թեհրան- 1983 թ., Վարանդեան հրատ.։***

ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՆԴԵԱՆ

Մի անգամ եւս սրբազան շարականագրի բառերով եկեղեցին շարականով աւետում է ծնունդը Աստուածորդուն. ***«Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ այսօր յայտնեաց»*** *(Շարական): Այո՛, մէկ անգամ եւս աշխարհը, մթնոլորտը օծւում է Աստուածայայտնութեան խորհուրդով:*

Արդարեւ պատմութիւնը մեզ յուշում է, որ Քրիստոսի ծնունդեան օրերին աշխարհը լի էր ապականութեամբ, Հռոմի իշխանաւորները այդ օրերին աշխարհը իրենց տիրապետութեան տակ առած մարդկային հասարակական կեանքը վերածել էին քաոսի:

Նիւթական շւայտութեամբ յղփացած աշխարհը անհրաժեշտօրէն կարիքը ունէր փրկութեան, փրկութիւն, որը պիտի գար երկնքից: Մարգարէները ի սկզբանէ Եսայի յայտնատեսի բառերով գուշակել էին աշխարհի Փրկչի գալուստը: Միքիէ մարգարէն ինքն էլ մարգարէացել էր յիշեցնելով, որ Բեթղեհէմից կը գայ սպասւած Փրկիչը. ***«Եւ դու Բեթղեհէմ, Եփրաթայի սակաւամարդ տուն, կը լինես Յուդայի երկրի հազարաւորների մէջ: Քեզնից կելնի ինձ համար Իսրայէլի մի իշխան եւ նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է»*** *(Միք. 5:2):*

Յովհաննէս Աւետարանիչ գրում է. ***«Աշխարհի ստեղծագործութիւնից առաջ գոյութիւն ունէր Բանը: Բանն Աստծու հետ էր եւ Բանը Աստուած էր»*** *(Յվ. 1:1): Մատթէոս Աւետարանիչը ասում է.* ***«Նա մի որդի պիտի ծնի, եւ նրա անունը Յիսուս պիտի դնես, որովհետեւ նա իր ժողովրդին պիտի փրկի իր մեղքերից»*** *(Մտ. 1:21):*

Աստուածորդու գալուստով աշխարհը մի նոր սկզբի առաջ է, աշխարհ՝ փրկւած ու սրբւած մեղքից եւ վերագըտած իր աստուածային այն պատկերը, որ մեղքի պատճառով աղաւաղած էր, քանի որ մեղքը մարդս հեռացնում էր իր կոչումից եւ նրան վերածում մեղքի շտեմարանի: Այլ խօսքով մեղքը մարդուն առաջնորդում է փորձութեան. փորձութիւնը մեր հեռացումն է Աստծուց: Անհնազանդութիւնը Աստծու կամքին մեղք է: Հետեւաբար հարկ է յիշել Տէրունական աղօթքի այն տողերը, որ ասւած է. ***«Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէն»:***

Աստուածորդու ծնունդով աշխարհը նոր շունչ, ոգի ու կերպարանք ստացաւ: Աշխարհը Քրիստոսի սիրով ողողւեց:

Այդպէս է նաեւ ժողովուրդների կեանքը: Մեծագոյն եւ ճակատագրական յեղաշրջումներն ու մեծ իրագործումները արդիւնք են մեծ սէրերին եւ այդ սէրերով արտայայտւող կեանքի:

Աստուածային սիրոյն իբրեւ արտայայտութիւն աշխարհը նոր իմն կերպարանափոխւեց, մարդ արարածը ինքն էլ վերանորոգւեց: Առաքեալի բառերով. ***«Որեւէ մէկը, որ միացած է Քրիստոսին նոր արարած է, նա այլեւս այն չէ, ինչ որ նախապէս էր, որովհետեւ նա ամբողջութեամբ նորոգւեց»*** *(Բ Կրն. 5:17): Քրիստոսի ծնունդով վերանորոգւած մարդը մի կողմից իր մէջ վերակենդանացնում է Աստծու անաղարտ պատկերը, միւս կողմից էլ պարտականութիւն է ստանում իր շրջապատում լինել սիրոյ եւ խոնարհութեան, հեզութեան եւ մարդկանց միջեւ հաճութեան սերմնացանը:*

Պօղոս Առաքեալը Կորնթացիներին գրած իր երկրորդ նամակում յայտաբար իր նորահաստատ եկեղեցու անդամներին թելադրում է, որ միշտ հետամուտ լինեն Քրիստոսի ներկայութեանը եւ նրա ուսուցումների գործադրութեան, որովհետեւ Քրիստոս Ինքն է նորոգութեան աղբիւրը: Հայոց Շնորհալի հայրապետի բառերով. ***«Հնութիւնների նորոգողն է, որին դիմում է մարդ արարածը յարատեւօրէն նորոգւելու յոյսով»:***

Քրիստոսով վերանորոգւած մարդը առաւել զօրացած, ամրացած ու բիւրեղացած սիրոյ ողջոյնով մեր սիրտն ու հոգին լցնում են ներողամտութեան, փոխադարձ յարգանքի զգացումներով, այլեւ կապւած կը լինեն միմեանց, մեր հայրենիքին, լեզուին, մշակոյթին, բռնագրաւած Արցախին վերատիրանալու անվրէպ յոյսին:

Քրիստոսի Հրաշափառ ծննդեան եւ Աստուածայայտնութեան «մեծ եւ սքանչելի խորհուրդը» դարերով փառաբանւած, ամէն տարի աւելի կենդանի գիտակցութեամբ, յարաճուն հաւատքով ու վերանորոգ կամքով զրահաւորում է բոլոր նրանց, ովքեր տեսնում ու ապրում են սէր Աստծու մարդեղութեան խորհուրդը եւ բարի հովիւների նախանձախնդրութեամբ շտապում են տեսնելու նորածին մանուկ Փրկչին:

Այս խոհերով շնորհաւորում եմ մեր թեմի հաւատացեալ քոյրերին եւ եղբայրներին, ինչու չէ նաեւ մեր ժողովրդի բոլոր զաւակներին, որտեղ որ կան:

Աղօթում ենք նաեւ իրանահայ մեր քոյր թեմերի թեմական առաջնորդներին եւ հաւատացեալ ժողովրդին՝ բոլորին մաղթելով անամպ կեանք եւ գործերի յաջողութիւն: Աղօթում եմ վասն խաղաղութեան՝ հայոց աշխարհի, վիրաւոր Պաղեստինի, բռնագրաւած վիրաւոր Արցախի եւ արցախահայութեան:

Ո՛վ Օծեալ Փրկիչ Բեթղեհէմեան քո լոյսով իմաստութիւն տուր բոլոր նրանց, ովքեր յանուն խաղաղութեան եւ իրենց իրաւունքների ձեռքբերման անդուլ պայքար են մղում:

Խաղաղութիւն պարգեւիր ո՛վ Տէր ողջ աշխարհին եւ նաեւ հայոց աշխարհին եւ Իրանին. Ամէն:

ԱՂՕԹԱՐԱՐ՝
ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ
Առաջնորդ Թեհրանի հայոց թեմի
1 Յունուարի 2024
Թեհրան

ՄԵՆՔ «ՏԵՂ» ՈՒՆԵ՞ՆՔ ԱՇԽԱՐՀՈՒՄ...

Յիսուսի Ծնունդը պատմող աւետարանական հատուածը վկայում է, որ երբ սուրբ կոյս Մարիամը Յովսէփի հետ Բեթղեհէմ հասաւ, իջեւաններում կեցութեան տեղ չէր մնացել նրանց համար: Օգոստոս կայսեր հրամանին հնազանդւելով, երկրի տարբեր շրջաններից բեթղեհէմցիները նրանցից աւելի շուտ էին ժամանել քաղաքը եւ լցրել հիւրանոցները: Այս պատճառով աւետարանիչը վկայում է ասելով, որ «նրանց համար տեղ չկար»:

«Նրանց համար տեղ չկար...»:
(Ղկ 2.7)

Հրաշալի Սուրբ Ծնունդը տեղի ունեցաւ քաղաքի մօտակայքում, մի ախոռի անպաճոյճ յարկի տակ, իսկ նորածին աստուածորդի Յիսուսը հանգչեց կենդանիների յարդակերով լցւած մսուրում:

Քաղաքակիրթ եւ առաջադէմ ներկայ դարում, երբ ճամբորդական հեշտագոյն պայմաններն են վայելում օտարերկրեայ ճամբորդները, եւ գրեթէ գոյութիւն չունեն հին հասկացութեամբ պանդուխտներ, մարդիկ նոյն օրը առաւօտեան Արեւելքում են նախաճաշում, եւ նոյն գիշեր ընթրում Արեւմուտքում: Այլ խօսքով, տեղի կամ իջեւանի յարմարագոյն պայմանները նախօրօք ապսպրելու արհեստագիտական միջոցներով, նոյնիսկ հազարաւոր կիլոմետրեր հեռաւորութիւնից նրանք ընտրում են իրենց նախասիրած սենեակը այս կամ այն հիւրանոցում:

Աշխարհի լայն ու անծայրածիր լինելու մասին ինչքա՛ն շատ գրութիւններ կան անցեալից ժառանգւած, իսկ այսօր ինչքա՛ն շատ թւով մարդիկ արտայայտւում են այս մասին, հակառակ դրա, որ քաջատեղեակ են երկրագնդի սահմանափակ վայր լինելու պարզ իրողութեան: Արբանեակային լուսանկարներն ու տեսաերիզները Երկիր մոլորակի բոլոր մասերը պարզութեամբ ցուցադրում են, ամէն գաղտնիք քօղազերծած լինելու ինքնավստահութեամբ: Դրանց շարքում, ի պահանջել հարկի, կարող են բացայայտել ո՛չ միայն զինւորական դիրքերը, այլեւ ցանկացած վայրի կամ տան ներքնասենեակների այլեւայլ մանրամասնութիւնները: Անհեթեթ է սակայն այն, որ անցանկապատ ներկայ աշխարհում մարդիկ այս կամ այն վայրը յանկարծ իրենց սեփականութիւնը համարելով, նոր սահմանագծումներ կատարեն, նոր անուն տան տեւել վայրին եւ սեփականացնեն այն: Պարզ է, որ եթէ Աստուածորդուն տեղ չտուեցին մարդիկ այս աշխարհում, իրենց նմանին բնա՛չ են զիջելու իրենց «տեղը»...:

Մեր ժողովրդի զաւակները քանիերորդ անգամը լինելով անտուն ու անօթեւան են մնում այս աշխարհում...: Տեղահանութեան, աքսորի ու ցեղասպանութեան նորօրեայ կրկնօրինակումը քաղաքակիրթ աշխարհի սառը խղճի թատերաբեմում, յուսահատութեան մէգով պատեց իւրաքանչիւր հպարտ հայորդու հայրենասիրութեամբ բաբախող սիրտը: Հաւաքաբար ցուցաբերւած ազգային համբերութիւնը անպայմա՛ն սահմանափակումների է ենթարկւելու, այլապէս մենք առիթ տւած կը լինենք հակառակորդին, որ մեզ հետ վարւելու վատագոյն կերպը ի գործ դնի:

Բայց մենք «տեղ» ունե՞նք աշխարհում...

Գլխաւոր հարցականը ներկայիս ա՛յս է մեզ համար, որը մտատանջութեան հասնող տագնապ է առաջացրել իւրաքանչիւր գիտակից հայի հոգում: Տագնապ նախ վերագտնելու մեր տեղը այս փոքր երկրագնդի տարածքում, եւ երկրորդ՝ փաստելու մեր արժանապատիւ դիրքը միջազգային ընտանիքի շրջանակներում:

«Տեղ»-ի կամ «բնակութեան վայր»-ի պատւանունն է Հայրենիքը, որի սեփականատէրը լինելը դարերից ի վեր բոլոր քաղաքակիրթ ազգերի արդար իրաւունքն է համարւել: Արեան գնով ցուցաբերւած ինքնապաշտպանութեամբ, մշակութային իրագործումների տարբեր արտայայտութիւններով՝ լեզուական, մատենագրական, երաժշտական, նկարչական, ճարտարապետական եւ սոյն բնագաւառի այլ ճառագայթումներով կերտւած հայրենիքը, տւեալ ազգի համար միայն ու միայն ժառանգւած հողակտոր չէ՛, այլ մի վայր՝ որտեղ ո՛չ միայն ապրում, այլեւ արարում են նոյն ժողովրդի զաւակները եւ՛ անհատապէս եւ՛ հաւաքաբար: Այսպէս է ըմբռնւում հայրենի հողի նուիրականութիւնը. այլապէս երկրագնդի այս կամ այն մասից վերցւած մի ափ հողը մասնաւոր տարբերութիւն չի՛ ունենայ միւսից, բացի քիմիական այլազանութիւններից:

Բայց մենք «տեղ» ունե՞նք աշխարհում...

Հարցը նորից է քրքրում մեր միտքը, միաժամանակ վերյիշեցնելով այն ահաւոր եւ ամօթալի կացութիւնը, որի բովից անցանք ազգովին 2023 թւականի վերջալոյսին: Իր դարաւոր բնօրրանից բռնագաղթած մի հատւածը մեր ազգի, ցանուցրիւ եկաւ Հայաստանում եւ աշխարհասփիւռ գաղութներում, վերջնական «տեղ»-ի երազանքով փակելու իր աչքերը, ինչպէս իրենց կիլիկեան հորիզոնին յառած փակեցին Արեւմտահայաստանից աքսորւած մեր նախնիները անցեալ դարում:

Բայց մենք «տեղ» ունե՞նք աշխարհում...

Կրկնւում է նոյն հարցը անողոքաբար եւ չարչրկում մեր միտքը, միաժամանակ վերաթարմացնելով

(Շար. 6-րդ էջում)

ԱԶԳՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ

Այսօր մեր մարդացեալ Տիրոջ եւ մանկացեալ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի ծննդեան տօնն է, ուստի նաեւ Աստուածայայտնութեան եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաջին տաղաւար տօնը:

Հետաքրքրական է Աւետարանչի ակնարկութիւնը, որը հիմնւած է պատմական ճշգրիտ տեղեկութիւնների եւ ճշմարտութեան վրայ, թէ՝ ինչպէս Յիսուս Մեսիայի ծննդեան ժամանակ մարդահամար է կատարւել եւ ինչպէս են ընդառաջել խնամատար սուրբ Յովսէփն (մեր եկեղեցու օրացոյցում Յովսէփի աստուածահայր անւանւած) ու սուրբ Կոյս Մարիամ Աստուածածինը:

«Այդ օրերին Օգոստոս կայսրը հրապարակեց
մի հրամանագիր՝ իր կայսրութեան սահմաններում գտնւող
բնակիչների մարդահամար անցկացնելու...»
(Ղուկասի Աւետարան 2.1):

Բնականաբար ոչ ոք չէր կարող հակառակել թագաւորական հրամանին, սակայն մի պահ փորձենք երեւակայել, թէ ինչքա՛ն դժւար է, նորակազմ ընտանիքի գլուխ կանգնած նշանեալ մարդու համար, ձըմռան ցրտին եւ սառն օդին, վերցնել ծննդաբերութեան օրերին հասած իր խօսեցեալ կողակցին ու հետիոտն մեկնել ոչ թէ ուրիշ քաղաք՝ այլ նահանգ, այն էլ՝ դժւար պարագաներում եւ անբարենպաստ պայմաններում, երբ նիւթապէս գտնւում էին համեստ վիճակում:

Կարող ենք մտաբերել, թէ ինչպիսի հոգեվիճակով եւ նոյնիսկ մտատանջութեամբ ճանապարհ ընկաւ վերոյիշեալ զոյգը: Արդիական ճամբորդութեան ոչ մի դիւրութիւն կամ յարմարաւէտութիւն վայելելու կարելիութեամբ, նախնական ձեւերով, ամէն ինչի յարմարւելու պարտադրանքի տակ, նրանք թողեցին Գալիլեայի Նազարէթ քաղաքն ու մեկնեցին Բեթղեհէմ քաղաք՝ Դաւիթ թագաւորի ծննդավայրը, քանզի Յովսէփը Դաւթի ցեղից եւ ազգատոհմից էր:

Այս բոլոր տագնապների ու տանջանքների աւարտին, ի վերջոյ ծնւեց Յիսուս Մանուկը, որ ոչ միայն մխիթարութիւն եւ ուրախութիւն պատճառեց իր ծնողներին, այլեւ դարձաւ Լոյսն ու Ճշմարտութիւնը ամբողջ աշխարհի:

Աւետարանական սոյն դրւագում, եթէ փորձենք ուշադրութեամբ եւ խորաթափանց կերպով զննել այն, պիտի նշմարենք խօսեցեալ զոյգի եւ ի մասնաւորի՝ սուրբ Յովսէփի ազգասիրութիւնն ու պատկանելիութեան գիտակցութիւնը: Նա կարող էր անտեսել իր պարտականութիւնը, կամ նոյնիսկ, այլազան պատրւակներ ճարելով, մտածել փոխել իր ազգատոհմը՝ մնալու համար իր քաղաքը կամ նւազագոյն հեռաւորութեամբ ճամբորդելով լուծել իր խնդիրը:

Պարտաճանաչ ու գիտակից սուրբ Յովսէփն այդպէս չվարւեց սակայն, այլ իր պարտաւորութիւնը դասեց ամէն բանից վեր՝ յանձն առնելով բոլոր տեսակի վտանգ եւ զոհողութիւն, պարզապէս հաւատարիմ մնալու իր ազգին, ազգատոհմին ու նահապետական շառաւիղին:

Նոր Կտակարանում՝ Աւետարաններում արձանագրւած իւրաքանչիւր դէպք, դրւագ, հատւած, տող կամ նոյնիսկ երբեմն բառ ունի իր դաստիարակիչ դերակատարութիւնը: Յիսուս Քրիստոսի ծննդեան իմաստալից ու խորհրդաւոր դէպքը ինքնին առանձին լի է բազմազան դաստիարակութեամբ: Ընտրեալ բնաբանում մենք կարող ենք տեսնել երփներանգ կէտեր, որոնցից գլխաւորը, այսօր, մեզ համար ցուցաբերւած օրինակելի հնազանդութիւնն ու մանաւանդ հարազատ պատկանելիութեան գիտակցութիւնն է:

2020 թւականից սկսեալ դառն եղան մեր պատմութեան եռամեայ էջերը, սակայն իր ամենադաժան աստիճանին հասաւ անցնող տարւայ սեպտեմբեր ամսին, երբ կորցրեցինք մեր Արցախեան հայրենիքն ու բնիկ ժողովուրդը՝ մեր հայրենակիցների բռնագաղթով: Սրտաճմլիկ է լսել նմանօրինակ լուրեր եւ նոյնիսկ սեփական աչքերով ականատես լինել համացանցային ապացուցող պատկերների: Հազարամեակներ իր հայրենի հողի վրայ ապրելուց յետոյ, անխիղճ ու ոճրագործ համաշխարհային ղեկավարների քմահաճոյքով կորցնել տուն, տեղ, կալւած ու հայրենիք՝ անընդունելի է որեւէ ազգի կամ նոյնիսկ անհատի համար:

Երեւի այս էր մեզ վիճակւած բախտը ու ճակատագիրը: Եթէ ընդունենք, որ անկարելի է փոփոխել բախտ կամ ճակատագիր, անվիճելի է նման հաւատք կամ համոզում, սակայն հաւատում եմ, որ ամէն ինչ, նոյնիսկ բախտն ու ճակատագիրն ունեն իրենց պատճառները:

Եթէ փորձենք չափել մեր հայեցի դաստիարակութեան եւ ազգային պատկանելիութեան գիտակցութեան գործնական աստիճանաչափը, ինչքա՞ն բարձր թւանշան կարող ենք ապահովել արդեօք: Ինչո՞ւ ենք հասել այսօրւայ մեր իրավիճակին. որովհետեւ մեզանից շատերի համար հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնն ու հայեցի դաստիարակութիւնը վերացական ու տեսական գաղափարներ են միայն, որոնց մասին ճառելու մէջ փորձում ենք գերադասել միմեանց: Եթէ իսկապէս իղձը կամ տենչն ունենք տեսնելու մեր Ազգի եւ Հայրենիքի ծաղկումը, աճն ու զարգացումը, պէտք չէ մոռանալ, որ նրանց աղբիւրը քրիստոնէական դաստիարակութիւնը, հայեցի դաստիարակութիւնը, ինչպէս նաեւ ինքնութեան եւ ազգային պատկանելիութեան գիտակցումն է:

(Շար. 6-րդ էջում)

«Երեք...

(Շար. 3-րդ էջից)

կողմից, ապա նրանց մասին առանց սուր քննադատության յիշատակելն անհնար էր: Իսկ ժողովրդին պէտք էր ներկայացնել այն ժամանակների որեւէ հերոսի եւ Անդրանիկ Օզանեանը, ով հրաժարուել էր ՀՅԴ-ից եւ նեղացած հեռացել Հայաստանի Հանրապետութիւնից, միանգամայն յարմար գործիչ էր:

Անհնար էր, որ Խորհրդային Հայաստանում տեղադրուէին ՀՅԴ անդամներ Արամ Մանուկեանի, Դրաստամատ Կանայեանի կամ Գարեգին Նժդեհի, ինչպէս նաեւ բոլշեւիկեան տեռորի զոհեր Դանիէլ Բէկ-Փիրումեանի եւ Մովսէս Սիլիկեանի արձանները, պատմութեան դասագրքերում գրուէին նրանց անունները, որպէս հերոսներ:

…

Ինչպէս ասում են, հերթը հասաւ Վազգէն Սարգսեանին: Վազգէն Սարգսեանը, որպէս քաղաքական գործիչ, ճանաչում ստացաւ 1990 թւականին, Երասխի պաշտպանութեան մարտերի ժամանակ, որպէս համակարգող: Մինչ այդ, նկատի ունեմ 1988 թւականից սկսած արցախեան շարժմանը նա ակտիւութիւն չի ցուցաբերել: Երասխի մարտերից յետոյ, Վազգէն Սարգսեանը սկսեց յաճախ երեւալ ՀՀՇ շէնքում: Ինքս նրա հետ ծանօթացել եմ հէնց ՀՀՇ-ում եւ նա ինձ վրայ թողել է անկեղծ, անմիջական, նաեւ քաջարի տղամարդու տպաւորութիւն: Այդպէս էի մտածում մինչեւ 1991 թւականի, կարծեմ գարունը: Մի անգամ գործով գնացել էի ՀՀ Գերագոյն խորհրդի նիստերի դահլիճ: Դահլիճի մուտքի մօտ հաւաքուած էին Հայոց Ազգային Բանակի (ՀԱԲ) կալանաւորուած անդամների մայրերը, կանայք, քոյրերը, պահանջելով ազատել իրենց հարազատներին: Շէնքից դուրս եկաւ Սմբատ Յակոբեանը: Ի դէպ, մինչ Վազգէն Սարգսեանի յայտնուելը, «սպարապետ» կոչումը պատկանում էր Սմբատ Յակոբեանին: Սմբատին տեսնելով, ցուցարար կանայք աւելի բորբոքուեցին եւ գոռգոռացին նրա վրայ: Սմբատը բարկացաւ եւ կանանց ցուցադրեց իր վիրակապած թեւը, ասելով. «Էդ ո՞ւմ վրայ էք յարձակւում»: Այդ պահին դռներից դուրս եկաւ Վազգէն Սարգսեանը: Բոլոր կանայք «մոռանալով» Սմբատին, սկսեցին բղաւել Վազգէնի վրայ: Եւ չէք պատկերացնի, թէ ինչ տեղի ունեցաւ: Վազգէնը բռունցքները պարզած, փողոցային հայհոյանքներով, յարձակուեց կանանց վրայ, նրանց գետին տապալելով, շարունակելով ոտքերով եւ բռունցքներով հարուածել: Մի կերպ ես ու Սմբատը նրան հեռացրեցինք: Եթէ ես անձամբ ականատես չլինէի այդ տեսարանին, երբէք չէի հաւատայ: Այդ օրուանից յետոյ, Վազգէն Սարգսեանի մասին կարծիքս լիովին փոխուեց եւ նա իմ կարծիքով ընդամէնը ինքնահաստատուող մարդ էր, թէկուզ բռունցքների հաշիւն:

Վազգէն Սարգսեանի, որպէս սպարապետի, հրամանատարի, երկար տարիներ Հայաստանի Պաշտպանութեան նախարարի գնահատականն, իհարկէ առաջին հերթին պէտք է տալ նրա՝ այդ պաշտօնում եղած գործունէութեան, այլ ոչ մարդկային յատկութիւններով: Նոյնը վերաբերւում է Արցախի ինքնապաշտպանական ուժերի գլխաւոր հրամանատար Սամուէլ Բաբայեանին:

Վազգէն Սարգսեանն առաջին անգամ նշանակուեց Հայաստանի պաշտպանութեան նախարար 1991 թւականի դեկտեմբերին, ԽՍՀՄ փլուզումից յետոյ: Այդ ժամանակաշրջանում, երբ նա պաշտպանութեան նախարար էր, 1992 թ. մայիսին ազատագրուեց Շուշին, ապա Բերձորը, որի շնորհիւ ցամաքային կապ հաստատուեց Արցախի ու Հայաստանի Հարապետութեան միջեւ: Ընդունենք, որ այդ յաղթանակներում վճռական դեր է ունեցել Վազգէն Սարգսեանը: Ընթերցողի մօտ հարց կառաջանայ, թէ ինչու եմ կասկածանքով այդ մասին գրում: Շատ պարզ, յայտնի է, որ նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը դէմ է եղել Շուշիի ազատագրմանը եւ քիչ հաւանական է, որ Վազգէն Սարգսեանը գաղտնի գործէր: Շուշիի ազատագրման հիմնական հեղինակ համարւում է Արկադի Տէր-Թադէոսեանը: Ինչեւէ, հետագայում, նոյն 1992 թ. ամռանը, իրավիճակը պատերազմի ճակատում կտրուկ փոխուեց: Լաւ յիշում եմ, թէ ինչպէս ԳԽ-ում պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանը հանգստացրեց պատգամաւորներին ասելով, թէ Արծուաշէնը ամուր պաշտպանուած է եւ անհանգստանալու կարիք չկայ: Մի քանի օր անց Արծուաշէնն ընկաւ: Յաջորդ ԳԽ նիստում Վազգէն Սարգսեանը յայտարարեց, որ միեւնոյնն է Արծուաշէնը պաշտպանելն ու պահելն անհնար էր: Թշնամին գրաւել էր Արցախի հիւսիսը, ամենօրեայ ռմբակոծութիւնների տակ էր յայտնուել Կապանը: Ադրբեջանի նախագահ Էլչիբէյը պատրաստւում էր ոտքերը Սեւանում լւանալ: Այսօրւայ պէս յիշում եմ, հացի հերթերում մարդիկ խուճապահար խօսում էին Հայաստանը լքելու մասին: Բարեբախտաբար, ի տարբերութիւն ներկայ քպ-ական իշխանութեան ժամանակի, այն տարիներին ընդդիմութիւնը միասնական էր եւ չէր հաշտւում Արցախի կորստի հետ: Ընդդիմութեան հետեւողական եւ վճռական ճնշման տակ, նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը ստիպուած եղաւ պաշտօնանկ անել Վազգէն Սարգսեանին եւ պաշտպանութեան նախարար նշանակել Վազգէն Մանուկեանին: Կարճ ժամանակ անց, ռազմաճակատում իրավիճակը կտրուկ փոխուեց, այս անգամ յօգուտ մեզ: Ազատագրուեցին Արցախի գրաւուած շրջանները, հայկական բանակը Իւրի Խաչատուրովի գլխաւորութեամբ ոչ միայն վերականգնեց Կապանի անվտանգութիւնն, այլեւ մխրճուեց թշնամու դիրքեր եւ առաւել ընդլայնուեցին Հայաստանի եւ Արցախի ընդհանուր սահմանները: Արդէն 1993 թ. ազատագրուեց Քարվաճառը: Այն միայն տարածք չէր, դրանով Արցախն ու Հայաստանը փաստացի վերամիաւորուեցին: Յաղթանակներն ու պատմական հայկական հողերը շարունակուեցին ազատագրուել նաեւ 1993 թւականին նշանակուած, յաջորդ պաշտպանութեան նախարար՝ Սերժ Սարգսեանի օրօք նոյնպէս: Յաղթանակների կերտմանը մեծ դերակատարութիւն են ունեցել Արցախի նախագահ Ռոբերտ Քոչարեանը, Սամուէլ Բաբայեանը, գեներալ Նորատ Տէր-Գրիգորեանցը եւ ուրիշներ: Մարտի դաշտում տեղի ունեցող անյաջողութիւններն, ինչպէս ցանկացած երկրում, այնպէս էլ Ադրբեջանում բերեց խորը ճգնաժամի, որն էլ աւարտուեց իշխանափոխութեամբ: Ադրբեջանի արդէն, նոր՝ փորձառու ղեկավար Հէյդար Ալիեւը դիմեց Մոսկւա եւ արդէն 1994 թ. Բիշքեկում մայիսի 5-ին ստորագրուեց արձանագրութիւն, որով կոչ արուեց կողմերին հրադադար կնքել: Արձանագրութեան տակ ստորագրեցին Հայաստանի, Արցախի, Ադրբեջանի, Կիրգիզստանի խորհրդարանների նախագահներն, ինչպէս նաեւ Ռուսաստանի պաշտօնական ներկայացուցիչը եւ ԱՊՀ միջխորհրդարանական խորհրդի քարտուղարը: Այդ արձանագրութեամբ դէ իւրէ եւ դէ ֆակտո, Հայաստանը, Ռուսաստանը՝ որպէս միջնորդ, Կիրգիզստանը, ԱՊՀ երկրները, ինչպէս նաեւ Ադրբեջանը ճանաչեցին Արցախը, որպէս առանձին սուբիեկտ պետութիւն: Արձանագրութեանը հետեւեց հրադադարի մասին պայմանագիրը, որն էլ արդէն ստորագրեցին Հայաստանի, Արցախի եւ Ադրբեջանի պաշտպանութեան նախարարները: Պայմանագիրն ուժի մէջ մտաւ 1994 թւականի մայիսի 11-ին: Այս պայմանագրով եւ Հայաստանը եւ Ադրբեջանը եւս մէկ անգամ ճանաչեցին Արցախը, որպէս անկախ պետութիւն: Բա՞, ա՛յ հայրենի Արցախն ուրացող՝ քպ-ականներ...

Ըստ էութեան, 1994 թւականի մայիսին կնքուած հրադադարի պայմանագիրը նոյնն էր, ինչ 2020 թւականի նոյեմբերի 9-ի պայմանագիրը: Բայց ի տարբերութիւն մեզ՝ որ չհաւատացինք մեր յաղթանակին, Ադրբեջանը հրադադարն օգտագործեց ոտքի կանգնելու եւ ռեւանշի հասնելու համար: Եւ եթէ Հայաստանում, ներեցէք՝ խրտնում են ռեւանշ բառից, Ադրբեջանում բոլոր քաղաքական ուժերը ռեւանշիստներ էին:

Եւ ահա, հրադադարից յետոյ, արդէն 1995 թւականին Վազգէն Սարգսեանը նորից նշանակուեց պաշտպանութեան նախարար: Համաշխարհային պատմութիւնից ինձ յայտնի չէ նման դէպք, երբ պարտուած պաշտպանութեան նախարարը նորից վերանշանակուի նոյն պաշտօնին:

Պատճառը պարզ է: ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի համար, ոչ թէ արցախեան յաղթանակներն էին կարեւորը, այլ իր իշխանութիւնն ու այն պահպանելը: Եւ նրան թւում էր, այո՛ թւում էր, որ Վազգէն Սարգսեանը, ոչ միայն իր համախոհն է, գործընկերն ու ընկերը, այլեւ իրեն հաւատարիմ գործիչ: Մինչ այդ, 1993 թւականին, պատերազմի ժամանակ, Վազգէն Սարգսեանը հիմնադրեց Երկրապահ կամաւորականների միութիւն (ԵԿՄ) կոչւող հրոսակախումբը: ԵԿՄ-ն ոչ թէ պատերազմի վետերաններին սոցիալական աջակցութեան կազմակերպութիւն էր, այլ զինուած, ինչպէս նշեցի՝ հրոսակախումբ: Ո՞վ է տեսել, որ պետութեան մէջ, բացի բանակից, ոստիկանութիւնից, այլ յատուկ ծառայութիւններից, մէկ այլ ոչ պետական կազմակերպութիւն, օրինական զինուած խմբեր ունենայ: Իրականում, Վազգէն Սարգսեանը ԵԿՄ-ն ստեղծել էր միայն ու միայն իր համար, նպատակ ունենալով, յարմար պահի հասնել իշխանութեան: Իսկ Լեւոն Տէր-Պետրոսեանին թւում էր, թէ ԵԿՄ-ն իր յենարանն է: Սկզբնական շրջանում, Լեւոն Տէր-Պետրոսեանի սպասելիքները Վազգէն Սարգսեանից եւ ԵԿՄ-ից արդարացան, քանի որ նաեւ, եթէ ոչ՝ հիմնականում, հէնց ԵԿՄ-ի «ջանքերի շնորհիւ» ՀՀՇ-ն եւ Լեւոն Տէր-Պետրոսեանը «յաղթեցին» 1995 թ. խորհրդարանական եւ 1996 թ. նախագահական ընտրութիւններում: 1995 թ. խորհրդարանական ընտրութիւններում, «Հանրապետութիւն» դաշինքի յետեւում թաքնուած ՀՀՇ-ից եւ այլ մանր-մունր կուսակցութիւններից բացի, դաշինքում մեծ թիւ էին կազմում ԵԿՄ անդամները: Որպէս, Լեւոն Տէր-Պետրոսեանին հաւատարիմ մարդ, Վազգէն Սարգսեանը 1996 թ. նախագահական ընտրութիւններից յետոյ յայտարարեց, որ եթէ ընդդիմադիր թեկնածուն հաւաքէր ձայների նոյնիսկ 100%-ը, միեւնոյնն է իշխանութիւնը նրան չէին յանձնի:

Վազգէն Սարգսեանը, որպէս պաշտպանութեան նախարար պաշտօնավարեց մինչեւ 1999 թւականը: Այդ տարիներին, խաղաղ պայմաններում, բանակում, միջին հաշւով ամէն տարի, զոհւում էին օրական մէկ զինուոր: Պատճառը ոչ կանոնադրական յարաբերութիւններն էին, շատ հրամանատարների անփութութիւնն, ինչպէս նաեւ անպատժելիութիւնը: Այդ բոլոր գործերը կոծկում, կամ որպէս ինքնասպանութիւն էր ներկայացնում զինդատախազ Գագիկ Ջհանգիրեանը: Առեղծուածային էր պաշտպանութեան նախարարութեան ֆինանսների վարչութեան պետ Մարիկ Աւետիսեանի սպանութիւնը, ներեցէք՝ ինքնասպանութիւնը:

Վազգէն Սարգսեանը լինելով իշխանութեան հիմնական սիւներից մէկը, իր հարազատ եղբայրներին նշանակել էր Արարատի երկու՝ ցեմենտի եւ պահածոների գործարանների տնօրէններ:

1996 թ. նախագահական ընտրութիւններից յետոյ, չնայած «յաղթանակին», Լեւոն Տէր-Պետրոսեանը կորցրել էր վստահութիւնն իր իսկ իշխանութեան հանդէպ: Այդ մասին ինձ յայտնել են նրա մի քանի մտերիմներ: Այն շատ լաւ գիտակցում էր Վազգէն Սարգսեանն ու սպասում յարմար առիթի, իշխանութիւնը վերցնելու համար:

Այդ առիթը եկաւ 1997 թ., երբ Լեւոն Տէր-Պետրոսեանը գրեց իր հանրայայտ «Պատերա՞զմ, թէ՞ խաղաղութիւն. լրջանալու պահը» ծրագրային յօդուածը: Իբրեւ թէ, դէմ է յօդուածի թեզերին, Վազգէն Սարգսեանը, վարչապետ Ռոբերտ Քոչարեանի եւ ներքին գործերի եւ ազգային անվտանգութեան միաւորուած նախարար Սերժ Սարգսեանի հետ 1998 թւականին իրականացրեց պալատական յեղաշրջում: Իսկ, թէ ինչու իբր, քանի որ Վազգէն Սարգսեանը քաջատեղեակ էր, ինչպէս Լեւոն Տէր-Պետրոսեանի, այնպէս էլ նրա խորհրդական Ժիրայր Լիպարիտեանի Արցախի հարցի լուծման, այն է՝ Արցախը Ադրբեջանի կազմում տեսնելու տեսակէտներին: Յեղաշրջումը ԱԺ-ում «վաւերացուեց» հէնց ԵԿՄ պատգամաւորների կողմից: Յաւաք, յեղաշրջմանը մասնակից եղաւ եւ այն ողջունեց նաեւ, այն ժամանակւայ արմատական ընդդիմութիւնը, մտածելով, թէ Լեւոն Տէր-Պետրոսեանի հեռանալով, իրենց համար կանաչ ճանապարհ է բացւում դէպի իշխանութիւն:

Յեղաշրջումից յետոյ, ըստ ինձ հասած տեղեկութեան, Վազգէն Սարգսեանին համոզել են, որ ճիշտ չի լինի, որ պաշտպանութեան նախարարը դառնայ երկրի նախագահ, այն կը դիտարկւի որպէս ռազմական յեղաշրջում: Արդիւնքում նախագահ դարձաւ վարչապետ Ռոբերտ Քոչարեանը: Նորից յղում անելով իմ անանուն աղբիւրներին, նշեմ, որ կարճ ժամանակ անց, Վազգէն Սարգսեանը կատաղիօրէն գղջացել էր իր զիջողութեան համար եւ առիթ էր փնտրում Ռոբերտ Քոչարեանին գահընկեց անելու համար: Այդ տեսակէտից առեղծուածային էր ներքին գործերի հրամանատար Արծրուն Մարգարեանի սպանութիւնը, թէ՞ ինքնասպանութիւնը: Ի՞նչ կասես, Անդրանիկ Քոչարեան:

1999 թ. նախընտրական դաշինք կազմելով 1998 թ. Կարէն Դեմիրճեանի հետ, վերջապէս Վազգէն Սարգսեանը համարեա հասաւ իր նպատակին: Նախագահ Ռոբերտ Քոչարեանի իշխանութիւնն արդէն ձեւական բնոյթ էր կրում եւ մնում էր եւս մի աւելի դիւրին յեղաշրջում եւ ողջ իշխանութիւնը կը յայտնուէր Վազգէն Սարգսեանի ձեռքում:

Եւ անսպասելիօրէն տեղի ունեցաւ հոկտեմբերի 27-ի ահաբեկչութիւնը, որի մասին կարծիքս հրապարակուած է (https://www.aravot.am/2021/10/31/1226098/):

Ահա այսպիսին է, իմ համոզմամբ, հայ անւանի զօրավարների եռեակից, ըստ ժամանակագրութեան վերջնի իրական կերպարը: Եւ նորից հարց է առաջանում, ինչու ոչ Նորատ Տէր-Գրիգորեանցը, Իւրի Խաչատուրովը, Արկադի Տէր-Թադէոսեանը, Վազգէն Մանուկեանը, Սերժ Սարգսեանը, Ռոբերտ Քոչարեանը, նոյնիսկ՝ Սամուէլ Բաբայեանը, որոնց կազմակերպչական եւ ռազմական ունակութիւնների շնորհիւ ունեցել ենք յաղթանակներ, այլ պարտութիւնների եւ բազում անօրինականութիւնների հեղինակ Վազգէն Սարգսեանը:

Յիշեցնեմ նախորդ զօրավարների մեծարման պատճառները, Վարդան Մամիկոնեանի դէպքում՝ եկեղեցական, զօրավար Անդրանիկի դէպքում՝ խորհրդային ուղղորդուած քարոզչութիւնները նրանց հերոսներ դարձրեցին: Վազգէն Սարգսեանի դէպքում, աւելի շատ գործօններ նպաստեցին նրան, որպէս յաղթող սպարապետի մեծարման հարցում: Նախ, արձանագրենք, որ նրա մահից յետոյ, ԵԿՄ-ն շարունակեց մնալ, որպէս ցանկացած իշխանութեան հիմնական յենարաններից մէկը: Իսկ ԵԿՄ, ներեցէք անգրագէտ, կամ լաւագոյն դէպքում կիսագրագէտ ամդամներն իրենց դիրքով հասարակութեան մէջ, իրենց ողջ ունեցածքով պարտական էին միայն Վազգէն Սարգսեանին:

Երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը, հոկտեմբերի 27-ի ահաբեկչութեան մէջ իրենից կասկածները հեռացնելու համար Վազգէն Սարգսեանին եւ Կարէն Դեմիրճեանին շնորհեց Ազգային հերոսի կոչում, որը միեւնոյնն է արդիւնք չտուեց եւ կասկածները մնացին, եթէ աւելի չխորացան: Որեւէ ընդդիմադիր քաղաքական կամ հասարակական գործիչ, նոյնպէս ձեռնպահ էին մնում Վազգէն Սարգսեանի մասին ճշմարտութիւնն ասել, կամ լռում էին, կամ ընդհանուր երգչախմբի հետ միասին գովերգում: Լռակեացները անհանգստանում են իրենց վրայ յարձակումներից եւ որ իրենց չկասկածեն հոկտեմբերի 27-ի մեղսակցութեան մէջ, գովերգողներն՝ իրենց դիրքի պահպանման եւ իշխանութեան հասնելու եւ պաշտօն ստանալու ակնկալիքով:

Եթէ սպարապետ Վարդան Մամիկոնեանը հաւատարիմ լինելով իր ուխտին, հերոսաբար զոհուեց ճակատամարտում, Անդրանիկ զօրավարն իսկապէս նւիրեալ է եղել, առաքինի եւ հմայիչ անձնաւորութիւն, ապա Վազգէն Սարգսեանը խորհրդանիշն է պարտութիւնների, հարիւրաւոր անմեղ զոհերի, կոռուպցիայի, ընտրակեղծիքների եւ այլ անօրինականութիւնների:

Եւ ահա Երեւանում կանգնեցուած է Վազգէն Սարգսեանի արձանը, փողոցը անւանակոչւել նրա անունով, ինչպէս նաեւ ռազմական համալսարանը նոյնպէս կրում է նրա անունը: Նրա հայրական տունը դարձել է Վազգէն Սարգսեանի տուն-թանգարան:

Ամփոփում.

Այսպիսով արձանագրենք, որ անկախ պատճառներից, մենք՝ հայ ժողովուրդը մեծարում ենք պարտուած զօրավարներին, կանգնեցնում նրանց արձանները, փողոցներ կոչում նրանց անուններով, նրանց նւիրուած հերոսական երգեր երգում, գրողները վէպեր, նկարիչները կտաւներ, քանդակագործները արձաններ են կերտում նրանց յիշատակին:

Իսկ յաղթող զօրավարնե՞րը... Միայն վերջին 7 տարիներին կանգնեցուեցին Գարեգին Նժդեհի եւ Արամ Մանուկեանի արձանները:

Ամէն դէպքում, նշենք, որ եթէ Վարդան Մամիկոնեանի եւ Անդրանիկ Օզանեանի դէպքում պարտուած ճակատամարտերն են, ապա Վազգէն Սարգսեանի դէպքում՝ նրան են վերագրւում յաղթանակները: Այնպէս որ ապագայում, յանուն բուն հայկական արդարութեան վերականգնման համար՝ Վազգէն Սարգսեանին կը փոխարինեն Դաւիթ Տօնոյեանը, Օննիկ Գասպարեանը, Վաղարշակ Յարութիւնեանը, Արշակ Կարապետեանը, Սուրէն Պապիկեանը, իրենց գլխաւոր հրամանատար կոչեցեալի հետ միասին: Այս անգամ յուսանք, որպէս՝ անբարոյական պարտութեան հեղինակներ:

Yerkir.am

ՋՐՕՐՀՆԵՔ

Տէր Վրթանէս քհնյ. Բաբախանեան



Ա) Այսօր Սուրբ տօն Ջրօրհնէք է,
Ամենիս համար ցնծութեան օր է,
Յիսուս ծնուեց Բեթղեհէմում,
Գնացին տեսան Նրան մսուրում,
Խանձարուրով էր փաթաթուած,
Ոչ ոք այդ բանը չէր սպասում,
Բ) Աստծու Որդին Աշխարհի Տէր,
Այդ չափ Իրեն խոնարհեցնում:
Խոնարհութիւնը սէր ու յարգանք է,
Հոգու համար մեծ պարծանք է,
Ով իրեն խոնարհեցնէ,
Նա Քրիստոսի աշակերտ է,
Կը դառնայ Դանիէլ մարգարէ,
Ճշմարտութեամբ նա կը դատէ,
Տասներկու տարեկան պատանին,
Ունէր ճշմարտութեան հոգին:
Գ) Իշխաններին դատապարտեց,
Իրենց լեզուով իրենց դատեց,
Ճշմարտութիւնը յայտնուեց,
Շուշանիկին մահից փրկեց,
Ով ինչ գործի մութը տեղում,
Կը յայտնուի լոյս աշխարհում,
Չարագործները դատապարտուում,
Եւ արդարները ազատուում:
Դ) Ճշմարիտ լինենք եղբայրասէր,
Արդարասէր, Աստուածասէր,
Քրիստոս մեր սիրոյ համար ծնուեց,
Յորդանան գետում մկրտուեց,
Ծովի սրբուած ջրերը խմեցին,
Քրիստոսին հաւատացին,
Տեսան եկաւ Ս. Հոգին,
Ասաց Սա է իմ սիրելի Որդին:
Ե) Որդին Յիսուս Քրիստոսն է,
Մեզ ամենիս պահողն է,
Այսօր Նրա Ս. Ծննդեան օրն է,
Որ ասում ենք Ջրօրհնէք է,
Մեր մէջ լինի Ս. Հոգին,
Շնորհաւոր է Նոր տարին,
Սիրով լինենք միասին,
Խաղաղութիւն աշխարհին:

Տարեմուտին

ՆԵՐՍԷՍ ՏԷՐ- ՄԵՍՐՈՊԵԱՆ



Մէկ տարի էլ անցաւ մեր կեանքից,
Պոկուեց եւս մի էջ
Անհունի մէջ մշուշուեց, խաւարեց,
Անցեալը սնամէջ:
Այսպէս է կեանքը
Անցնողը կանցնի,
Կը ծնուեն նոր մարդիկ,
Կերազեն ապրելու երջանիկ:
Մէկ տարի էլ անցաւ
Մեծացանք տարով,
Վերջացաւ,
Մթնեց անցնող տարին,
Դե՛հ ինչ
Երթայ բարով…

1997

Ժամանակը

Թիք-թաք, թիք-թաք,
Սահում է ժամանակը
Անցնում է արագ, շտապ
Ու տանում քեզ
Անծիր մի աշխարհ,
Ուր չկայ ոչ սկիզբ, ոչ վերջ,
Որտեղից յետ չի դարձել
Ոչ մի շնչաւոր:
Թիք-թաք,
Ջարկում է ժամացոյցը եւ յուշում,
Որ անցնում է կեանքը,
Մարում է անմարելին,
Լռում անլռելին…
Թիք-թաք, թիք-թաք…

2009

Ժամացոյցիս…

Դու տասնամեակներ եղել ես ինձ հետ,
Ուր գնացել եմ ուղեկցել ես ինձ,
Եւ յուշել սահող ժամ-ժամանակը,
Ու քամել կեանքը:
Այսօր ինձ նման յոգնել, նւաղել,
Առաջ ես գնում դողդող քայլերով,
Բայց երբ որ սառեն սլաքները քո,
Դրանց հետ մէկտեղ
Կը վերջակէտուի, իմ ժամանակը…

1998

Տօնական գիշեր

Տօնական գիշեր,
Նոր օր, Ամանոր,
Ինչ յուշե՛ր, յուշե՛ր,
Թողեցի այնտեղ
Հեռու մշուշում,
Իղձեր, երազներ,
Մնացին կիսատ,
Թերի անաւարտ…
Տօնական գիշեր,
Նոր օր, Ամանոր
Անցած յուշերս եմ
Փորում, փորփրում,
Տխուր ու մոլոր,
Փնտրում այս գիշեր,
Անցած, գնացած
Օրերս բոլոր,
Ու Նոր Ամանոր…

2005

Ամանորի գիշեր

Նորից Նոր տարի,
Կաղանդի գիշեր,
Բայց մէկը չեկաւ
Որ դուռը բացէր,
Նստէր սեղանին
Ու պատառ կիսէր…

Էլ ի՞նչ Նոր տարի,
Էլ ի՞նչ Ամանոր,
Երբ թողել ենք մեր
Բունը կիսաւեր,
Ու դառել կռունկ,
Անտուն բնաւեր…

Էլ ի՞նչ Նոր տարի,
Ի՞նչ կաղանդ գիշեր,
Չգիտես որի՞ն
Կամ ո՞ւմը յիշել,
Երբ չկան արդէն
Ընկեր տղէրքը,
Աւա՜ղ լռել է
Կենսուրախ երգը…
Էլ ի՞նչ Նոր տարի…

2003

ՄԵՆՔ…

(Շար. 4-րդ էջից)

մեր յիշողութեան մէջ Հայաստան աշխարհի անկախութեամբ բացուած արշալոյսի խանդավառութիւնը: Սոյն անսպասելի ուրախութիւնից հարբած մեր ժողովուրդը երկար ժամանակ չգիտակցեց, որ յաղթանակն ու անկախութիւնը պահպանելը իրենց յատուկ՝ մասնաւոր գին ունեն: Որեւէ երկրում ապրող եւ ամենահամեստ «տեղ»-ն ունեցող մարդը պիտի իմանայ իր «տեղ»-ը, եւ գիշեր ատեն այն ապահով պահպանելու ձեւը, փակելով դրա դռներն ու պատուհանները, եւ խաւարի մէջ իսկ անքուն հսկելով դրա անվտանգութեանը:

Բայց մենք «տեղ» ունե՞նք աշխարհում…

«Այո՛» պատասխանը սոյն հարցին տրուած, կասկածի տեղ չի՛ տալիս բնաւ, որովհետեւ դա մեր ներշխարհի պոռթկումն է, մեր նախահայրերի ջլապինդ կամքի անդրադարձ շարժումը: Նոյն կամքը, համայն աշխարհին ցոյց է տալիս այն աշխարհատարածքը հայրենի, որը կոչւում է «Ծովից ծով Հայաստան»: Անրջական մտածողութիւն չէ՛ այս, ո՛չ էլ ինքնախաբէութիւն: Հզօր ազգերը տեսլականներով են առաջնորդուում, բարձր դիւանագիտութեամբ պնդացնում իրենց մէջքը, եւ նոյնիսկ փոքրաթիւ լինելու արհամարհանքը ունկնդրելով միահեծան իշխանութիւն բանեցնող գերպետութիւնների յոխորտացող բարձրախօսներից, չեն շեղւում իրենց հայրենական սիրոյ ու հողային պաշտպանութեան ուղղութիւնից:

Այո՛, մենք ո՛չ միայն սովորական «տեղ» ունենք այս անիրաւ աշխարհում, այլեւ հայրենիք՝ Մայր Հայաստանը, որը իսկական դրախտավայրն է՝ համաձայն աստուածաշնչեան քարտէզագրութեան:

Աւետարանի էջերում Յիսուսը միայն ինքն իրեն համար հաստատ ասում է, որ այս աշխարհում «մարդու որդին իր գլուխը հանգչեցնելու տեղ չունի» (Մտ 8.20): Մի առիթով միայն տեսնում ենք, որ շատ կարճ ժամանակի համար, նաւի յետնամասում գլուխը բարձի վրայ դրած քնում էր նա, երբ ահեղ փոթորիկի պատճառով աշակերտները արթնացրին նրան, իրենց նաւի ստոյգ խորտակման եւ ընկղմումի վախը ազդարարելով (հմմտ. Մր 4.35-41):

«Տեղ» չունենալու մասին իր խօսքը մի այլ առիթով էլ յիշեցրեց Յիսուս, աղէխներին օրինակ բերելով, որոնցից իւրաքանչիւրը իր որջը ունի: Պատմութեան փորձը ցոյց է տուել մեզ, որ աղէխները նաեւ կարող են ուրիշների «տեղ»-ը որջի վերածել, այնտեղ խնջոյք սարքել, ձագեր ածել ու բազմանալ, սակայն մի օր անպայման այն աւերակելու, եւ անտէր թողնելով հեռանալու պայմանով…:

Թռչունների օրինակը եւս տալիս է Յիսուս նոյն հատուածում, որոնք բոլորն էլ իրենց բոյնն են ունենում: Տեսել էք, որ սրանք իրենց կտուցով եւ ասեղի բարակութեամբ՝ ոտքերով բոյն են հիւսում, իսկ ամենամեծը՝ «բարի արագիլ»-ը ինչքա՛ն բծախնդիր ճարտարութեամբ միաւորում է իր բերած իւրաքանչիւր ճիւղն ու շիւղը, հայի տան կտուրը նախընտրելով երկգմբէթ սարի՝ յաւերժական Արարատի դիմաց:

Սուրբծննդեան տէրունի պատգամը յատկապէս մեր ժողովրդի զաւակներին ուղղած, յուսահատուելու կոչ է: Երկնքի եւ երկրի Տէրը եթէ իջեւան չունեցաւ այս աշխարհում, սակայն նա պատրաստ է իր լայն հովանին տարածել մեր հայրենիքի եւ ազգի կեանքի երկնակամարի վերեւ, յատկապէս տեսնելուց յետոյ մեր ազգային հաւաքական կամքը եւ բռնցքուած սիրտը:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ
ՁԵԶ ԵՒ ՄԵԶ ՄԵԾ ԱՒԵՏԻՍ
Աղօթաձայն Օրհնութեամբ՝
ԳՐԻԳՈՐ ԱՐՔ. ՉԻՖԹՃԵԱՆ
Առաջնորդ
Ատրպատականի հայոց թեմի

Տօն Սբ. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան
5 յունուարի, 2024
Ազգային առաջնորդարան – Թաւրիզ

ԱՂԳՈՒԹԵԱՆ…

(Շար. 4-րդ էջից)

Ինչպէս որ փառքի ու յաղթանակի օրերին դերակատար ու պատասխանատու էինք բոլորս, նոյնպէս Արցախեան կորստի եւ վերջին տարիների բոլոր աղէտների մէջ եւս դերակատար ու պատասխանատու ենք բոլորս: Ոչ ոք թող չփորձի ինքնարդարացումով խուսափել պատասխանատուութիւնից կամ իրեն բաժին ընկած յանցանքից, որովհետեւ կարելի չէ մի քանի հոգու ծրագրած դաւաճանութիւնը իրագործուի ազգային ու հայրենական տարողութեամբ, եթէ իւրաքանչիւր անձ կամ հայ բաժին չունենայ իր գործով կամ դերակատարութեամբ. որոշները՝ մտածելով կամ ծրագրելով, որոշները՝ օգնելով, որոշները՝ դիւրացնելով, որոշները՝ միանալով, իսկ ուրիշները՝ չխառնուելով, խուսափելով, անգործութեամբ, անտեսելով, թէկուզ լռութեամբ, անփութութեամբ կամ նոյնիսկ անտարբերութեամբ:

Տօնական զգացումներից ամբողջութեամբ դատարկուած, դիմաւորում ենք մեր Նոր տարւայ ամենաուրախալի տօներն ու առիթները, որովհետեւ ազգովի կրեցինք մեր ամենածանր կորուստները: Որպէս քրիստոնեայ, սակայն, մանաւանդ որպէս Հայ հաւատացեալ, բացարձակապէս իրաւունք չունենք մեր հաւատը կորցնելու, այլ պէտք է անմար պահենք մեր յոյսը թէ՛ մեր մտքերում, թէ՛ մեր սրտերում եւ թէ՛ մեր հոգիներում:

Ամանորի եւ Սուրբ Ծննդեան այս բարեբաստիկ զոյգ առիթներով, միասնաբար ուխտենք վերանորոգել մեր հաւատն ու յոյսը, բայց մանաւանդ մեր ազգային ինքնութեան ու պատկանելիութեան գիտակցութիւնը: Այնպէս, ինչպէս Աստուածորդու ծննդեան օրը Բեթղեհէմեան Մսուրը, որպէս իր մէջ Սրբութիւն պարունակող արժէք, պատճառ դարձաւ, որ իր շուրջ հաւաքուեն շրջակայ բոլոր հովիւները՝ իրենց հօտերով, թող որ նոյն կերպ, հակառակ մերօրեայ անյուսալի պայմաններին, մեր Հայրենիքը, որպէս ազգային եւ համահայկական մսուր, որն իր մէջ է պարունակում մեր կրօնական, ազգային, հայկական ու հայրենական բոլոր սրբութիւններն ու արժէքները, իր շուրջ հաւաքի մեր բոլոր ղեկավարներին ու առաջնորդներին՝ իրենց բանաւոր ու հաւատացեալ հօտերով, որպէսզի վերակենդանացնենք մեր սէրը, յարգանքը, եղբայրութիւնը, միասնութիւնը, համերաշխութիւնն ու հանդուրժողութիւնը:

Իմ աղօթքն է, որ իւրաքանչիւրիս ներաշխարհը լինի նորակերտ սուրբ մսուր, այնտեղ վերածնելու մեր Տէրն ու Փրկիչը, որպէսզի մեր մէջ աստուածային պատկերի վերականգնման միջոցով մեզանից ճառագայթեն թէ՛ քրիստոնէական-հոգեւոր եւ թէ՛ մարդկային-ազգային բոլոր արժէքները: Գիտակցութեամբ դիմե՛նք ինքնաքննութեան ու ինքնասրբագրութեան: Զղջա՛նք ու ապաշխարե՛նք: Վերադա՛րձ կատարենք դէպի աստուածահաճոյ ճանապարհ: Միշտ ընտրե՛նք լաւն ու բարին եւ մեր կեանքը լցնե՛նք բարեգործութեամբ ու իսկական աստուածապաշտութեամբ՝ ընդունելու համար Աստծու օրհնութիւններն ու բարիքները, ինչպէս նաեւ երկնաւոր շնորհները, որպէսզի լուսափայլ մտքով, մաքրամաքուր հոգով ու սուրբ սրտով ողջագուրենք իրար եւ շնորհաւորենք ասելով. «Քրիստոս Ծնաւ Եւ Յայտնեցաւ. Ձեզ Եւ Մեզ Մեծ Աւետիս»:

ԱՂՕԹԻՒՔ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
ՍԻՓԱՆ ԵՊՍ. ՔԷՉԷՃԵԱՆ
Առաջնորդ
Սպահանի հայոց թեմի

Շաբաթ, 6 Յունուարի, 2024
Ազգային առաջնորդարան
Սուրբ Ամենափրկչեան վանք
Նոր Ջուղա - Սպահան, Իրան

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորագոյց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Յարութիւնեան եւ Միրբասու ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

ՆԻՆԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ (ՄԻՐԲԱՍՈՒ)

ցաւալի մահուան առիթով:

**ԱԼԲԵՐՏ, ԵՐԱՆ, ԺԱՍՄԷՆ ԵՒ ՄԱԹԻՒ ՄԻՐԲԱՍՈՒՆԵՐ,
ՀԻԼԴԱ, ՀՐԱՅՐ, ԱԼԻՆԱ ԵՒ ԼԻԼԻԱ ԻՍՄԷՖԵԱՆՆԵՐ,
ԺՈՌԱ, ԷՄՄԱ, ԷԼԵՆԱ ԵՒ ԷԴԳԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՆԵՐ,
ՅԱՍՄԻԿ, ՎՐԷԺ, ԷՒԵԼԻՆԱ, ԷԴԻԻՆ ԵՒ ԱՐԻՆ ԱՇՈՏԵԱՆՆԵՐ,
ՄԵԼԻՆԷ ԵՒ ԱՐԱՄԱՅԴ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՆԵՐ,
ՌՈՒԲԻԿ ԵՒ ՄԻՆԵԼԼԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՆԵՐ,
ԺԻՐԻԿ, ՀԵՐՄԻՆԷ, ԱՆԴՐԷ ԵՒ ԱՐԹԻՆ ՄԱՐԳԱՐԵԱՆՆԵՐ,
ՎԵՐԺԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ՓԱԹՐԻԿ, ՄԵԼԻՆԷ, ՓՈԼԵՏ ԵՒ ՇԱՒԱՐՇ ԻՍԿԱՆԴԱՐԵԱՆՆԵՐ,
ՅԱՍՄԻԿ, ՍԵՐԺԻԿ, ԱԹԻՆԱ ԵՒ ԱՅԼԻՆ ՄԱՐԳԱՐԵԱՆՆԵՐ,
ՄԱՐԻԷՏ ԵՒ ՎԱՀԻԿ ԹԷՅՄՈՒՐԵԱՆՆԵՐ,
ՄԱՐԻԱ, ԳԼԱԵՕԼ, ՓԷՅՔ ԵՒ ԺՈՒԲԻՆ ԲՈՒԼՈՒՐՋԻԵԱՆՆԵՐ**

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորագոյց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Արզումանեան եւ Ասլանեան ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

ԱՆԱՀԻՏ ԱՍԼԱՆԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

**ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ՝ ԸՆՏԱՆԵՕՔ,
ՍԱՍՈՒՆ ՄԻՆԱՍԵԱՆ՝ ԸՆՏԱՆԵՕՔ ԵՒ «ՄԻԳԵԼԻՍՏ» ԱԺԱՆՍ**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՒԷՐ

«Էթեհադ» շրջակայքում գտնուող մի ընկերութիւն կարիք ունի

փորձառու քարտուղարուհու

մինչեւ 35 տարեկան

Յանկացողները կապուեն՝

09194139313

միայն whatsApp կամ telegram

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը

ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից,

որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱԼԻՔ
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ ԼԻԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼԻԱՑՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Հեռ. 26320084 եւ 09124187835, Վահիկ Իսկանդարեան

Computer AGMA

Համակարգչային ընկերութիւն

خرید و فروش کامپیوتر | سخت افزار
ارتقاء سیستم | نرم افزار
سرویس در محل | شبکه

Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

مسافربری بین المللی
www.didarseir.ir
Email:info@didarseir.ir

دفتر مرکزی
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4

نمایندگی نارمک
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77281288 • 021-77821769 • 021-77259537 • 09366955599
واتساپ
اینستاگرام @Didarseiregity

دفتر ایروان
خیابان نالباندیان - شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237



Մէկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
هواپیمایی قشم Qeshm Air

نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر

شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن

Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝
դէպի Հայաստան եւ վերադարձ

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف

WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰

آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی

7 STARS

خدمات آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی :

✦ Հայաստանում՝
Ամերիկայի եւ Կանադայի դեսպանատների հերթագրման ապահովում

✦ Թուրի անմիջական գործադրողը՝
Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում
مجری مستقیم تور در ارمنستان و دیگر نقاط جهان

09303810625 WhatsApp tel: 021-88796742-3

هواپیمایی قشم Qeshm Air
هواپیمایی ایران ایرتور IRAN AIRTOUR AIRLINES
VARESH AIRLINES هواپیمایی وارش
Armenia airways
7setaretours

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՈՒՄ Է

Այսու յայտնում ենք, որ

2024 թւականի «ԿԱՆԹԵՂ» օրացոյցը

ստանալու համար կարող էք դիմել հետեւեալ հասցէներին:

۱	کلیسای سرکیس مقدس	خیابان کریم خان زند، نبش خیابان استاد نجات الهی جنوبی
۲	فروشگاه آرارات	مجیدیه، ۱۶ متری دوم، مقابل کوچه ۱۱، پلاک ۱۲۱ تلفن: ۲۲۵۲۳۰۱۸
۳	فروشگاه رافی	مجیدیه، ۱۶ متری اول، بین کوچه ۶ و ۷، پلاک ۱۳۳ تلفن: ۸۸۴۰۵۲۸۰
۴	فروشگاه استاندارد	خیابان سنائی، بین کوچه ۲۲ و ۲۴، پلاک۱۴۹/۳ تلفن: ۸۸۳۰۶۴۶۰
۵	کلیسای حضرت مریم	خیابان جمهوری، خیابان میرزا کوچک خان، کلیسای حضرت مریم تلفن: ۶۶۷۰۶۱۵۱
۶	ملینا کارت	خیابان میرزای شیرازی، نبش خیابان ۱۵ تلفن: ۸۸۸۲۹۴۲۱
۷	سوپر زیتون	نارمک، ۴۶ متری غربی ، شیرمرد جنوبی (سهیلیان)، نرسیده به داریوش ملایری، پلاک ۳۵ تلفن: ۷۷۸۴۸۵۱۵
۸	فروشگاه توتو	نارمک، ۴۶ متری غربی، خیابان غیاثی پور جنوبی، نبش خیابان ۸۶ ، پلاک ۵۵ تلفن: ۷۷۹۹۰۶۳۳
۹	فروشگاه های کارت	مجیدیه جنوبی، ۱۶ متری اول، روبروی کوچه پنجم، پلاک۸۴ تلفن: ۸۸۴۰۹۶۳۳
۱۰	سوپر شهر فرنگ	خیابان قائم مقام فراهانی، جنب داروخانه، پلاک ۵۳ تلفن: ۸۸۳۰۷۸۵۱
۱۱	فروشگاه آرمن	نارمک، ۴۶ متری غربی ، شیرمرد جنوبی (سهیلیان)، پایین تر از خیابان ۸۴، پلاک ۳۶ تلفن: ۷۷۲۵۱۵۶۶
۱۲	انجمن فرهنگی ورزشی نائیری	مجیدیه جنوبی، ۱۶ متری دوم، کوچه زرین قبائی، پلاک ۱۴۶ تلفن: ۲۲۵۱۰۱۲۸
۱۳	روزنامه آلیک	خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶ تلفن: ۸۸۷۶۱۱۵۴
۱۴	قهوه آرام	خیابان قائم مقام فراهانی، پایین تر از میدان شعاع، پلاک ۶۴ تلفن: ۸۸۳۰۸۷۳۰

ՄԱՀԱԳԴ

Թանկ եւ եղել մեզ համար
Մեր սիրելի անգին հայր,
Քո անունը մեր սրտերում
Միշտ կը մնայ յաւիտեան:

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝

ՍԱՐԳԻՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ դեկտեմբերի 9-ին, Ամերիկայում:

Թաղումը կը կատարուի երկուշաբթի, յունուարի 8-ին, կէսօրւայ ժամը 12:00-ին, Թեհրանի Նոր Բուրասպան գերեզմանատանը:

Յուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 11:00-ին ներկայ գտնուել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

ՀԱՍՑԷ՝

Հարաւային Մաջիդիէ, Շահիդ Մոհամմադ Ռեզա Սիսի փողոց, համար 49, առաջին միաւոր:

Յաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան «Արցախ» սրահում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Ադրինէ եւ Նորիկ Այւազեաններ՝ դուստրը եւ փեսան՝ ընտանեօք:

Արմինէ եւ Ռազմիկ Քաղխոդազադէներ՝ դուստրը եւ փեսան՝ ընտանեօք:

Կարինէ եւ Բորիս Խոսրովեաններ՝ դուստրը եւ փեսան՝ ընտանեօք:

Անահիտ եւ Զօրիկ Մայիլեաններ՝ դուստրը եւ փեսան՝ ընտանեօք:

Ռոբերտ եւ Անեդ Պօղոսեաններ՝ որդին եւ հարսը՝ ընտանեօք:

Հրանդ եւ Փառքուհի Պօղոսեան-ներ՝ եղբայրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Մարիամ եւ Սալիմ Աբրահամեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

Ժորժիկ Բարունեան՝ աներորդին՝ ընտանեօք:

Վահիկ եւ Ալին Բարունեաններ՝ աներորդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Հրանդ եւ Վոլգա Շիրարջուներ՝ քրոջ որդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Կոչ վշտակցութեան եւ դատապարտման



Խորապէս վշտակցում ենք Քերման քաղաքում տեղի ունեցած անմարդկային ահաբեկչութեանը, որը յանգեցրել է աւելի քան 100 մարդու մահուան եւ բազմաթիւ վիրաւորների:

Մենք բուռն կերպով դատապարտում ենք անմարդկային այս արարքը, որը միտում է խաղաղ բնակչութեան կեանքը խանգարել:

Այս առիթով ցաւակցում ենք զոհերի ընտանեկան պարագաներին, վիրաւորներին ցանկանում ենք շուտափոյթ ապաքինում, եւ մեր սիրելի Իրանին առաւել խաղաղութիւն:

Վշտակցում ենք երկրի հոգեւոր առաջնորդ այաթօլլահ Խամենէիին, Հանրապետութեան նախագահին եւ պետական այրերին աղօթելով, որ Աստուած խաղաղութիւն պարգեւի Իրանին եւ իր ազնիւ ժողովրդին:

Թ.Հ.Թ. ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Փոքրամասնութիւնների պատգամաւորները դատապարտել են Քերմանի ահաբեկչական արարքը

«ԱԼԻՔ» - Իրանի Իսլամական խորհրդարանում Կրօնական փոքրամասնութիւնների պատգամաւորները համատեղ հաղորդագրութեամբ խստիւ դատապարտել են Քերմանում տեղի ունեցած ահաբեկչական ակտը, որի հետեւանքով զոհուել ու վիրաւորուել են մեծ թւով խաղաղ բնակիչներ:

Հաղորդագրութեան մէջ նշուած է, որ այն պայմաններում, երբ տարածաշրջանի վերիվայրումներով լի իրադարձութիւններում ակնյայտ է դարձել Իրանի անժխտելի դերը՝ տարածաշրջանի կայունացման ու հաւասարակշռման գործում, ռճրագործները է՛լ աւելի վայրագութիւնների են դիմում եւ նոյնիսկ վախենում են նահատակ գեներալ Սոլէյմանիի պէս խորհրդանիշից: Այս պատճառով թիրախաւորում են նրա հետեւորդների բազմութեանը եւ իրենց թշնամութիւնն ու ոխերիմութիւնն եւ բացայայտում, որի վառ օրինակը Քերմանում տեղի ունեցած ահաբեկչական գազրելի արարքն էր:

Հաղորդագրութեան մէջ պատգամաւորները դէպքի կապակցութեամբ վշտակցութիւններն են յայտնել Իսլ. յեղափոխութեան առաջնորդ այաթ. Խամենէիին եւ Իրանի սգակիր ժողովրդին, շեշտելով հասարակութեան բոլոր խաւերի զգօնութիւնը նման քստմնելի արարքների նկատմամբ:

Հաղորդագրութիւնը ստորագրել են՝ Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանը, Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, զրադաշտականների, ասորիների եւ հրեաների պատգամաւորներ՝ Էֆանդիար Էխթիարին, Շաղի Էնիէ Թեքիէն եւ Հոմայուն Սամեհեա Նաջաֆաբադին:

«Համշահրի» օրաթերթը հարցազրոյց է ունեցել Թեհրանի հայոց թեմի առաջնորդի հետ

«ԱԼԻՔ» - Թեհրանում լոյս տեսնող «Համշահրի» օրաթերթը Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առիթով համապարփակ հարցազրոյց է ունեցել Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մեպուհ արք. Սարգսեանի հետ: Զրոյցի ընթացքում Սրբազան Հայրը դատապարտել է Գազայի խաղաղ բնակչութեան դէմ սիոնիստական ռեժիմի անմարդկային եւ քստմնելի ոճրագործութիւնները: Իր զրոյցի մէկ այլ բաժնում Սրբազան Հայրը ընդգծել է. «Իրանը Պաղեստինի ժողովրդի միակ աջակիցն է»:

Օրաթերթը լոյս է տեսնելու շաբաթ, յունուարի 6-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը

ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից,

որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

Այսու մեր սիրելի ժողովրդին յայտնում ենք, որ շաբաթ, յունուարի 6-ին, 2024 թ. **մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան** տօների առիթով, Ս. Սարգիս առաջնորդանիստ մայր եկեղեցում պատարագելու եւ յաւուր պատշաճի քարոզելու է՝

Հոգեշնորհ Տ. Վիգէն վրդ. Տալգլըճեանը

Ս. պատարագի աւարտին կատարելու է **Ջրօրհնէքի** արարողութիւն՝ ի յիշատակ Քրիստոսի Մկրտութեան:

Սկիզբ ժամերգութեան՝	ժամը 8:30-ին
Սկիզբ ս. պատարագի՝	ժամը 10:00-ին
Քարոզ՝	ժամը 11:00-ին
Կարգ Ջրօրհնեաց՝	ժամը 12:00-ին

Կրօնական արարողութեան նախագահելու է թեմիս առաջնորդ՝

ԳԵՐՇ. Տ. ՄԵՊՈՒՀ Ս. ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԸ

Առաւօտեան պատարագից յետոյ եւ նոյն օրը ժամը 17:00-ից -19:00-ը թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Մեպուհ Ս. արք. Սարգսեանը ընդունելու է շնորհաւորանքներ ազգային առաջնորդարանի դահլիճում:

Մեր ժողովրդի զաւակներին սիրով հրաւիրում ենք՝ մասնակցելու Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան հոգեպարար արարողութիւններին՝ հաղորդուելու փօնի խորհրդով եւ վերանորոգելու ու վերակենսաւորելու իրենց քրիստոնէական հաւատքը:

Ծանօթ.-

Կիրակի, յունուարի 7-ին, 2024 թ., Յիշատակ Մեռելոց է: Այս առիթով մեր բոլոր եկեղեցիներում, ինչպէս նաեւ Նոր Բուրասպանի Ս. Ստեփանոս եւ Հին Բուրասպանի (Դուլաբ) Ս. Յովհաննէս մատուռներում մատուցւելու է ս. եւ անմահ պատարագ, որից յետոյ տեղի է ունենալու հոգեհանգստեան արարողութիւն հայոց ազգի համայն ննջեցեալների հոգիների խաղաղութեան համար:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

SET Coffee

فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117

0936-6726563
021-88305827
www.set-coffee.com

قهوه ست

املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

«Արարատ»

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی، چراغ لاله و لوستر، رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ، لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388

Մեր ընթերցողների ուշադրութեան

Շաբաթ, յունուարի 6-ին՝ Ս. Ծննդեան տօնի առթիւ խմբագրատունս փակ է լինելու: Թերթիս յաջորդ համարը լոյս է տեսնելու կիրակի, յունուարի 7-ին:

Նաեւ տեղեկացնենք, որ ընթերցողների տրամադրութեան տակ է դրւել «ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱՆԱՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՇԻՐԻՄԻՆ ԾԱՂԻԿՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ» «Ալիք»-ի գունաւոր յաւելուածը:

«ԱԼԻՔ»

ԳԻՐ....

(Շար. 1-ին էջից)

Խստօրէն դատապարտում ենք նման ահաբեկչական արարքները, որոնք ոչ մէկ ձեւով կարող են Իրանում իրանցիին վախեցնել:

Մեր վշտակցութիւնն ենք յայտնում երկրի հոգեւոր առաջնորդ այաթօլլահ Խամենէիին եւ նահատակների ընտանեկան պարագաներին աղօթելով, որ Աստուած խաղաղութեան մէջ ընդունի իրենց հոգիները, ինչպէս նաեւ աղօթում ենք Իրանի խաղաղութեան ու հզօրացման ի խնդիր:

Աստուածային օրհնութիւն եւ խաղաղութիւն Մեր սիրելի Իրանին:

Աղօթարար՝
ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ
Առաջնորդ Թեհրանի հայոց թեմի

«Իրանի....

(Շար. 1-ին էջից)

Քերմանի գերեզմանատանը տեղի ունեցած ահաբեկչական յարձակումը, այն որակել է որպէս հակահրանական յանցագործութիւն եւ պատկան մարմիններին ու պատասխանատուներին յանձնարարել է անյապաղ քայլեր ձեռնարկել յանցագործութեան հեղինակներին յայտնաբերելու եւ պատժելու ուղղութեամբ:

«Ազգի թշնամիները պէտք է իմանան, որ նման գործողութիւնները երբեք չեն կարող խաթարել Իրանի ժողովրդի երկաթեայ վճռականութիւնը պաշտպանելու իսլամական իդէալները, եւ նրանք աւելի վճռակամօրէն կը պայքարեն բռնութիւնը եւ ահաբեկչութիւնն արմատախիլ անելու համար»,- ասել է նախագահը: